

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԻՄԻԱԿԱՆ  
ԶԵՆՔ

Քիմիայի գ-ր ՅԱ. ԳԻՇՄԱՆԻ

661  
Ֆ-59

Հայաստանի բյուջեի Քիմիայի Բարեկամութիւնի Լենի-  
նովունի գալուստյան «Գործոփիմ» Ընկերության.

2013

661

\$ - 59

Պրոլետարէներ ըօլոր յերկների մէացեք

## ՔԻՄԻԱ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄ

300  
2791-ֆի

# ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔ

ՔԻՄԻԱՅԻ Դ-Ր ՑԱ. ՖԻՇԱՆԻ

Թարգմանեց ռուսերենից ԱԳՍ



ԼԵՆԻՆԱԿԱՆ 1925 թ.

Հրատարակչություն՝ Քիմիայի Բարեկամների Լենինականի  
գավառային «Դոբրոխիմ» Ընկերության,

ՌՈՒՍԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԳՐՈՒ-  
ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Քիմիայի դ-ր Յա. Մ. Ֆիշմանի այս աշխա-  
տանքը, վորը գրված է հոդվածների ձևով, ար-  
ժանի յե հրատարակել առանձին գրքույկով, վոր-  
պես չափազանց արժեքավոր լրացում մեր ունե-  
ցած ռազմա-քիմիական թարգմանական գրակա-  
նության:

Հեղինակն այսաեղ տալիս է «Քիմիական  
գենքի» արդի վիճակի սեղմ ու անվոփ նկարա-  
գիրը, հիմնվելով գլխավորապես ռազմա-քիմիա-  
կան ոտար գրականության վրա, վորը հիմնավո-  
րապես ուսումնասիրելու լայն հսարավորություն  
և ունեցել:

Այսաեղ բերված տվյալները վկայում են,  
վոր հեղինակը բավականին ծանոթ է յեղել իրան  
հետաքրքրող հարցերի բոլոր բուն աղբյուրների,  
մանավանդ Արևմտյան Յեվրոպայի ու Ամերի-  
կայի քիմիական արդյունաբերությունների հետ:

Ճիշտ է, հեղինակի մի քանի հատուկ հար-  
ցերի նկատմամբ ունեցած (գազաբալոնային  
գրոհի, հակագազի կլանողի մասին) հայացքները  
այնքան ել չեն համապատասխանում ներկայումս  
մեր ունեցած սկզբունքներին, բայց և այնպես  
այդ տարածայնությունը սկզբնական շրջանում  
կատարելապես բնական պետք է համարել և այդ  
բնավ չի գցում ամբողջ գրվածքի արժեքը:

Ներկա զբքույկի հրատարակությամբ մենք  
բաց ենք անում «Քիմիա յեվ պատերազմ» գի-  
տական-ժողովրդական սերիայի հրատարակու-  
թյունը աչքի առաջ ունենալով վոչ միայն զին-  
վորական, այլև քաղաքացի ընթերցողների լայն  
շրջաններին:

### Ուսուերեն բնագրից

## ՀԱՌԱՋԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Լենինականի Քիմիայի բարեկամների գավա-  
ռային «Դոբրոխիմ» ընկերությունը, լույս ըն-  
ծայելով Յա. Մ. Ֆիշմանի «Քիմիական զենք»  
զբքույկի հայերեն թարգմանությունը, նաև առաջա-  
ռությունի այսպիսով հիմք դնել ՀԱԽՀ-ում հայերեն  
լեզվով, հայ ընթերցող հասարակության համար  
«Դոբրոխիմին» վերաբերյալ գրականության: Հե-  
տագայում, յերբ մեր այս փորձը հաջողություն  
կունենա և մեր այս առաջն հրատարակությունը  
տարածվելով ցանկալի արդյունք կրտա, լենինա-  
կանի «Դոբրոխիմը» կըշարունակի հրատարակել  
արդեն թարգմանած ու տպագրության համար  
պատրաստ մի շարք հոդվածներ, զբքույկներ և  
այլ աշխատանքեր նվիրված ընդհանուր, ուազմա-  
կան և գործնական քիմիական գիտելիքներին  
(զյուղատնտեսական, ֆիզիոլոգիկ և այլն):

Առայժմ տալիս ենք քիմիա և պատերազմ  
սերիայի № 1 գիրքը:

Քիմիայի բարեկամների Լենինականի  
գավառային (Դոբրոխիմ) ընկերու-  
թյան գիտական-տեխնիկական սեկցիա:

## ՀՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Թունավորող նյութերի (ուազմական գազերի) պա-  
տերազմական նշանակությունը անցյալ պատերազ-  
մում միայն մասսամբ յերեան յեկավ: Յեթե պատերազ-  
մը շարունակվելու լիներ նաև 1919 թվին, յերբ ար-  
դեն կարգի յեր բերված գազերի մասսայական արտա-  
գրությունը և հնարավոր եր լրարձել ոդանավային  
գազային ուումբերի գործածությունը, պատերազմի  
պատկերը շատ խիստ կերպով կըփոխվեր:

Տեղի ունեցած հաշտությունը հասարակական  
լայն կարծիքի առաջ անհայտ թողեց այդ նոր զենքի  
իսկական ույժը: Շատերը նույնիսկ թերահավատու-  
թյամբ եյին վերաբերվում դեպի Թ. Ն.-ի (Թունավոր  
նյութերի) լայն չափերով կիրառելու հնարավորու-  
թյունը և պնդում եյին, վոր պատերազմական գազե-  
րը չարդարացրին իրանց վրա գրված հույսերը:

Այն ինչ, բոլոր յերկրների գինվորական հրա-  
մանատարությունները հաշվի առնելով ապագա պա-  
տերազմի համար գազային տեխնիկայի ահագին նշա-  
նակությունը, ձգառում են պահել և կատարել զորքի մեջ ունեցած իրանց քիմիական կազմակեր-  
պությունները: Զինվորական աչքի ընկնող հեղինա-  
կավոր անձինք խոստովանում են, վոր զինվորական  
արքեստն այժմ ապրում ե մի չտեսնված ճգնաժամ և  
վոր պատերազմական գործում տեղի յե ունենում խո-

շոր հեղափոխություն, վորը պետք ե բոլորովին կերպարանափոխսե պատերազմների բնույթը, նրա արտաքին կերպարանքը, տևողությունը, սարատեգիան և տակտիկան:

Ծպագա պատերազմը վերջին պատերազմին ավելի քիչ պետք ե նման լինի, քան թե վերջին պատերազմը՝ Խաչակրաց շրջանի սլատերազմներին:

Նոր զենքն իր բնույթով չափազանց սուր կերպով տարբերվում է նախկին բոլոր տիպի զենքերից:

Թ. Ն.-ը գործում են ավելի յերկար տևողությամբ, նրանք մասսայական հարված են հասցնում, նրանց գործողությունը ավելի քիչ է տուժում նշանառման վրիպումից և այլն: Նրանք կարիք չեն դում նախքան մարդուն հասնելը նախապես նյութական արգելքները վերացնելու, նրանք ուշք չեն դարձնում այդ արգելքների վրա, անցնում են դրանց թիկունքը և ավելի բուռն ու անվրեպ հարված են հասցնում քան ուռմբերի փշանքներն և շրապնելը: Ունենալով յերկարատև ներգործություն, դրանք շարունակ յերկուողի մեջէլըպահեն հարձակման յենթարկված զորամասերին:

Հրացանի ու հրետանու կրակը լինում և լոկ ակնթարթային և ուղիղ գծով: Հարվածի յենթարկվում են միայն նրանք, ովքեր վոր այդ պահին ընկած են լինում ուռմբի ճանապարհին, նրա արաեկատորիայի վրա: Հենց վոր այդ ակնթարթն անցնի, վտանգն ել անցած կընամարդի: Կորցնելով իրանց կենդանի ուժը, ուռմբի կամ գնդակի կտորտանքը անվնաս մնում են գետնին ընկած:

Բայց Թ. Ն.-երն այդպիս չեն: Նրանք իրանցով լցնում են ամբողջ տարածությունը՝ խրամատները, ջրանցքները, անտառներն ու պուրակները, բնակա-

րաններն ու ապաստարանները: Յեկ վոչ մի հակազազ չի կարող լիովին պաշտպանել մեծ քանակի թ. Ն.-ից: Գիշերվա մութն ու մառախուղը նպաստում են նրանց գործողությանը: Բավական ե վոր մարդ ընկած լինի այդպիսի գազով բռնված տարածության մեջ, վորպես-դի յենթարկվի նրա թունավոր ազգեցությանը:

Նոր զենքը բնորոշվում է, այսպես ասած, իր հարձակողական ծավալական շարժումով և վոչ կանխորոշ տրաեկտորիայի համաձայն, գծային շարժումով: Հապա ինչու այդ թ. Ն.-երը, վոր վաղուց արդեն ծանոթ են յեղել առաջներում ել չեն գործադրվել: Պատասխանը պարզ է, ամեն մի զենք և դրա հետ ել պատերազմական ամեն մի ձեւ արդյունք են իրանց համապատասխան դարեշրջանի: Մարդը, մի ուրիշ մարդու հարվածելու համար միշտ աշխատել և ավելի լավ սրելու իր ունեցած զենքը և տալ նրան հարձակողական մաքսիմալ ուժ: Այս վերջինն ել կախված է յեղել իր գարի արտադրական ու տեխնիկական հնարավորություններից: Ներկայումս յեղած հեռածիդ հրանոթները և կատարելագործված գնդացիրներն ել արդյունք են մեր ժամանակի մեխանիկական տեխնիկային, մետաղագործական ու մեխանիկական արդյունարերության մեջ յեղած արտադրական ունակության բարձրության:

Բայց այժմ հասել է մի այնպիսի մոմենտ, յերբ արտադրական ուժերը նորանոր արտադրության ձեվեր ստեղծելով լայնացնելով ու խորացնելով դրանց, բոլորովին փոխում են մարդկային փոխհարաբերության ձեւերը, մարդկային կյանքի զանազան յերեսույթները, և սրանց շարքում ել՝ պատերազմի ձեւերը: Պատերազմի նախկին ձեւերն այլևս չեն համապատասխանում գոյություն ունեցող արտադրության զար-

գացման մակերևույթին: Մի քանի քառակուսի կիլո-մետր տարածություն բռնող հսկայական քիմիական գործարաններն իրանց ահազին ու բարդ կահավորությունով մարդկության կարիքների համար շուկա յեն նետուն բազմատեսակ նյութերի ձևափոխություն ներկայացնող մթերքները: Նրանց շնորհիվ բարդանում և աճում ե մարդու պահանջները և դրանք ել իրանց հերթին առաջ են քաշում արտադրության նոր, բարդ ու ընդարձակ ձևեր:

Այս հսկա գործարանները մարդկությանը տալիս են մի այնպիսի չտեսնված զենք, վորի վորակը շատ կողմերով կախված ե քանակից: Բավական չե դեռ իմանալ թ. Ն.-ի արտադրելը, հարկավոր ե, վոր դրանք արտադրվեն նաեւ մեծ խնակությամբ: Առա թե ինչու մի քանի տասնյակ տարի առաջ թեև այդ ուազմական զաղերը արդեն հայտնի յեյին լաբորատորիաներում, բայց դեռ չեյին գործադրվում պատերազմական գործում: Առա թե ինչու, անցյալ պատերազմում ուազմական զաղերը չկարողացան հայտ բերել իրանց ամբողջ զրությունը

Պատերազմը մարդկային հասարակության մեջ գործող ընդհանուր որենքից բացառություն չի կազմում:

Անցյալ պատերազմում, այսպես կոչված, զաղային տեխնիկայի մանկության շրջանում, այն կարծիքն եր տիրում, թե բավական ե հնարել մի նոր զար, վորով կարելի լինի հաղթել պաշտպանության անպատճառ թշնամուն:

Այդ պատճառով ել զինվորա-քիմիական հետախուզական ամբողջ աշխատանքներն ուղղված եյին դեպի այն, թե ինչպես գտնեն իր Փիզիոլոգիկ հատկություններով ավելի զորեղ զար: Մինչև այժմս ել

դեռ տարածվում են (զիսավարապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում) Փանտաստիկ լուրեր անհավատալի հատկություններով ոժտված նոր զագեր զանելու մասին:

Սակայն, այդ լուրերը տարածվում են ի հաշիվ լայն հասարակության: Գործին մասնագետները շատ քիչ են հավատ ընծայում դրանց: Այսպես որինակ գիներալ Ֆրայսի փառաբանած լյուիզուը (Քլորվինիւղիքորաբարսին), յելուպական լաբորատորներում ըստուգման յենթարկվելով պարզվեց, վոր դեռ շատ հեռու յե այնչափ սոսկալի լինելուց, վոր իրավմամբ կարողանա, իրանով վոգեվորված ամերիկացիների մըկրտած «մահաբեր ցող» անունը արդարացնել Այդպես են նաև այն լուրերը, վոր իբր լյուզիտը 7 տարի մեռցրած ե պահում հողը. սա ևս առավել չի կարող ճիշտ համարվել, հենց այն պարզ պատճառով, վոր դեռ ևս այդպիսի փորձ չի կատարվել:

Ի հարկե, քիմիան, մանավանդ որգանականը, լայն հնարավորություն է տալիս այս կամ այն պատերազմական կարևորություն ունեցող նոր քիմիական բազարություններ գտնելու: Բայց և այնպիս, չափազանց կասկածելի կը լինի մաքսիմալ չափով ուազմական բոլոր հատկություններով ոժտված ուազմական իդեալիկան զազի գյուտը, Յեթե նույնիսկ գտնվի ել այդպիսի նյութ, ապա ինչպես մյուսների, այնպես ել այդ զազի դեմ գտնված կը լինեն պաշտպանության միջոցներ:

Ի հարկե, սրանից չպետք ե յեղբակացնել, թե հետաքա բոլոր վորոնումների աշխատանքները այդ ասպարիզում աննպատճակ են: Ընդհակառակը, հարկավոր ե պիտի վորոնել նոր թ. Ն.-ը, նախ այն պատճառով, վոր մինչև թշնամին դրա դեմ պաշտպանության

միջոցներ կըդտնի, կանցնի վորոշ ժամանակ, իսկ այդ ժամանակամիջոցում կարելի կըլինի ոգտագործել այդ նյութը: Յերկրորդ՝ վոր գուցի կարելի լինի գտնել մեզ արդեն հայտնի գաղերից ավելի արժեք ունեցող թ. Ն-ը, որինակ, կաշվի վրա իպրիտից\*) ավելի զորեղ կերպով ներգործողներ: Կարող ե պատահել վերջապես, վոր գտնվեն զանազան նկատառությունների համար ուրիշ հարմար նյութեր, վորոնք ավելի եժան լինեն, ունենան ավելի յերկարատև ազդեցություն կամ ուրիշ նյութերից քիչ ներգործվող լինեն և այլն: Այս ուղղությամբ վորոնողի համար աշխատելու լայն ասպարեզ կա: Միայն հարկավոր ե միանգամ ընդմիշտ հրաժարվել այն մտքից թե մի գեղեցիկ որ կարող ե լաբորատարիաց դուրս գալ այնպիսի հրեշավոր ույժ ունեցող գազ վորպիսին ունեցողը միանգամից կարող կըլինի հարթող հանդիսանալ: Ռազմական գազն ինչպիսի ույժ ել վոր ունենալիս լինի, ինչպիսի ֆիզիորգիկ քիմիական ու ֆիզիկական հատկություններով ել վոր օժագած լինի, ինչքան ել վոր համապատասխան լինի պատերազմի բոլոր պահանջներին, այնուամենայնիվ սոսկալի գենք համար պետք ե գործադրվի մեծ քանակությամբ:

Ներկայումս պատերազմական բոլոր գազերի գեմել կան պաշտպանության միջոցներ: Այժմյան հակագագերն ունեն ուժեղ կլանողներ, վորոնք մեխանիկապիս, մասամբ քիմիական ներգործությունների ոգնությամբ խափանում են ամեն տեսակի թ: Ն-ին և մաքրում են թունավորված որը: Սակայն թ: Ն-ը մասսայական

\*) Կարծում ենք, վոր այդպիսի բաղադրություն արդեն ստացել են Bales և Nickelson քիմիկոսները: Այդ բաղադրությունը նման է իպրիտին, միայն թլուրը փոխարինված է Բրոմով (բետա բետապրիմ գիբրումդիետիլսուլֆիդ):

կերպով գործադրելու գեպքում այդ հակագագերը գործնականում անբավարար են դառնում: Նրանց գործունեության տևողությունը սահմանափակ ե: Ամեն զինվոր չի կարող իր մոտ ունենալ մեծ քանակությամբ կլանողների պաշար: Իպրիտով թունավորված 50—70 կիլոմետր տարածությամբ գոտին, համարյա անանցնելի յե դառնում թեկուզ և հակագազով ու հակաիպրիտային զգեստներով պաշտպանված զինվորի համար: Բացի այն անհարմարությունից, վորը կապված է այդ ջրասուզական դժվարաշարժ ու կոպիտ զգեստի հետ, ի նկատի պետք ե առնել և այն, վոր զինվորները 2-4 որ մնալու յեն «իպրիտացրած» գոտում, և վոր նորմալ կլանողը այդտեղ կարող է զիմանալ միայն մի քանի ժամ, վոր բոլոր ջրերն ու կերակուրները թունավորված կըլինեն, ուր բոլոր ձիերն ու բեռնակիր անսունները ավելի վնասված կըլինեն քան մարդիկ և վերջապես մի տեղից մյուսն անցնելու ժամանակ պետք ե պաշտպանվեն ողանավերի հարձակությունից: Միայն հատուկ հակաիպրիտային գնացքները կամ գազերից պաշտպանված թանքերը կարող կըլինեն անպատճե կերպով անցնել այդպիսի թունավորված վայրերից: Անա այս և զազային գործում մասսայական գործադրության նշանակությունը: Անգամ յեթե մեծ ույժ ունեցող թ: Ն-երն ել վորը քանակով գործադրվեն, այժմս յեղած պաշտպանության միջոցների հանդեպ անկարող կըլինեն մեծ տպավորություն գործել: Ամենալավ գեպքում նրանք շատ-շատ կարող են ստիպել թըշնամուն հակագագեր հագցնելով նվազեցնել զորամասի ուղղմական ույժը: Խոշոր կորուստներ չեն կարող պատճառել նրանք, (յեթե հանկարծակի չըերեն հակառակորդին) վորովնեան հակառակորդը շուտով կարող կըլինի դուրս գալ մաքուր ողի մեջ: Թ: Ն-ի գործադրու-

թյան համար, քանակը վորակից ավելի կարեռություն ունի: Կարող են առարկել, թե պատերազմող պետություններից և վոչ մեկը ի վիճակի չե հարկավոր քանակով թ. Ն. արտադրելու: Ճիշտ ե, վոր այդ քանակը շատ մեծ պետք ե լինի, բայց վեր չի Գերմանիայի կամ Ամերիկայի ներկայիս ունեցած քիմիական գործարանների արտադրական ունակությունից: Պետք ե ի նկատի առնել և այն, վոր ամեննեխն կարիք չկա գոտում ընկած ամբողջ գետինը անխըտիր հագեցնել թ. Ն.-ով: Գոտին ամբողջությամբ թունավորված կարելի յե համարել, յեթե նրա վրայով տարված լինեն թ. Ն.-ի հաջորդող շերտեր, քանի վոր միենան ե, ողի հոսանքի ու դիֆփուզիայի ոգնությամբ ամբողջ մթնոլորդը թունավորված կըլինի, իսկ չըթունավորված շերտի ներկայությունը այս գեպքում վոչ մի նըշանակություն չունի, վորովհետեւ, նախ վոր հակառակորդը դժվար թե կարողանա գանել այդպիսի շերտեր և յերկրորդ, վոր յեթե գտնի ել չպետք ե կարողանան իրենց հակագաղերը հանել: Մյուս կողմից ել թ. Ն.-ի փոշիանացնելը սավառնակներից տեղի կունենա կատարելագործված միջոցներով, վորը կատ նաև մեծ խնայողություն:

Պարզ հաշիվները մեզ կտան հետեյալ թվերը՝

Զերմության 0° աստիճանին իպրիտի գոլորշիները այնպիսի առաձգականություն ունեն, վոր ստեղծում են ուղմական նպատակներին լիուլի բավարարող գոլորշիների կենտրոնացում (կոնցենտրացիա), իպրիտի միջին կենտրոնացումը, իրենով հագեցած ոգում կարելի կըլինի ընդունել ըստ ծավալի  $1/1000,000$ -ի հավասար (Զերմության աստիճանի տատանումը 0—50):

Իպրիտի մոլեկուլային քաշը կըր թվերով հավասար է 159-ի ( $\text{ClCH}_2\text{CH}_2\text{S}$ ).

Նա 5½ անգամ ողից ծանր ե: Ըսդունելով մեկ վտր ողի քաշը ջերմության 0°-ի և 760 միլիմետր մթնոլորդային ճնշման տակ հավասար 0,00129 կիլոգրամի, իպրիտի գոլորշիների մեկ լիտրի քաշը հավասար կըլինի 0,00129  $\times 5,5 = 0,007095$  կիլոգրամի: Զերմության 0°-ին մեկ միլիոն լիդրի կամ 1000 խորանարդ մետրի մեջ պարունակվող իպրիտի քանակությունը ուրիշն հավասար է 0,007095 կիլոգրամի:

Մի միլիլիտրի խոր. մետրը կըպարունակե 7,095 կիլոգրամ: Իպրիտի գոլորշինով հագեցած ողի բարձրությունը ընդունելով 20 մետր, կտանանք 50 միլիոն քառ. մետր տարածություն, մոտ 7 տոն թ. Ն.-ով թունավորած:

Այսպիսով ուրիշն, 7 տոն իպրիտը բավական ե, 5 կիլոմետր տրամագծով և 20 մետր բարձրությամբ մթնոլորդային սյունը թունավորելու համար: Հետևապես 280 տոնը բավական կըլինի 200 կիլոմետր տրամագծով, այսինքը 10,000 քառ. կիլոմետր բռնող գոտին թունավորելու: Յեթե այս թվերին ավելացնելու լինենք նաև 600—700 տոն, իպրիտի գոլորշացումի պակասորդը լրացնելու համար, կըր թվով կտանանք 1000 տոն, վորը բավական կինի յերկար ժամանակով թունավորած պահելու մի այնպիսի ընդարձակ գոտի, շնորհիվ վորին, զինվորական մասերի ունեցած հակագաղերի պաշտպանությունը շատ քիչ գործնական կղանա:

Անցյալ պատերազմի վերջին Գերմանիան գործածելով Մելլյերի շատրարդ մեթոդը, ամսական արտադրում եր 1000 տոն իպրիտ: Հատկապես այս նըպատակով կառուցված ամերիկական գործարանները կիրառելով Coulthrie-ի կատարելագործած մեթոդը կարող յեն արտադրել որական 300 տոնից վոչ պակաս իպրիտ:

Արցունքաբեր գիմացկուն գաղերի համար, վորոնք նույնպես կարող են ընդարձակ գոտիներ գարակել մեծ մաշտաբով գործադրվելով ծախսը զգալիապես կպահասեցնեն, վորովհետև ռազմական գործողությունների համար պահանջվող դրանց ունեցած կենտրոնացումը, իպրիտի ունեցածից բավական ցած կըլինի, Այնպիսի գաղերն, ինչպիսին ե որինակ՝ բրում բենզելի ցիանուկը գործադրելի ե դառնում արդեն մի լիտրի 0,0003 մելլիգրամ կենտրոնացումով, այսինքն մոտավորապես իպրիտի նախնական կենտրոնացումից 100 անգամ պակաս:

### Թ. Ն.-ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՅԱՀՈՒՄ ՅԵՎ ԱՊԱԳԱՑՈՒՄ

Անցյալ պատերազմում Թ. Ն.-երը գերիշխող դրության չհասան վոչ միայն այն պատճառով, վոր պատերազմող կողմերը անպատճառ ելին այդ նյութերը մասսայական կերպով արտադրելու, այլ և այն, վոր Թ. Ն.-ի տարածելու միջոցները դեռ շատ ելին նախնական (պրիմետիվ) և դեռ չելին համապատասխանում նոր գենքի բնույթին:

Գաղաքալնային առաջին գրոհները, բնականաբար անկարող ելին յերեան հանել քիմիական գենքի ամբողջ ուժը: Գաղային գրոնի այս կոպիտ ու ծանրաշարժ ձեզ անցյալ պատերազմի վերջին թողին: Նրա հիմնական թերությունները կայանում ելին նըրանում, վոր նախապատճառատական աշխատանքները շատ ելին դժվար ու բարդ, վոր թշնամու հետախուզները հեշտությամբ կարող ելին գտնել նրանց տեղը, վոր չափազանց մեծ կախումն ունեն ողյերեւութարանական ու տեղագրական (մետեորոլոգիկ ու տոպո-

կրաֆիկ) պայմաններից և վոր Թ. Ն.-ի ընտրությունը սահմանափակ ե լինում: Իրոք, գաղաքալոնային գրոնի ժամանակ հնարավոր ե միայն այնպիսի Թ. Ն.-ի գործածությունը, վորոնք ոռվորական ջերմության տակ գագ են դառնում: Փաստորեն գործ են ածվել միայն յերկու գաղեր՝ քլոր և ֆոսգեն: Դիմացկուն գաղերի, այսինքն, պատերազմական տեսակետից առանձին արժեք ունեցող Թ. Ն.-ի գործածության հնարավորությունը իսպատ վերացվում ե:

Գաղաքալնային գրոնի առավելությունները նըրա անաղմուկ լինելու և բավականաչափ կենտրոնացումով թունավոր մակեր առաջ բերելու հնարավորությունն եր: Ապագայում հնարավոր կդառնա նաև հեշտ կերպով տեղափոխվող Թ. Ն.-ի ըեզերվուարներից ոգտվելը: Այդպիսի ըեզերվուարներ յեն, որինակ, թունավոր մոմերը, վորոնց կարելի ե պատրաստել ուզած մեծությամբ: Այդ մոմերը կազմված են լինում վորեն ձեւի (գլխավորապես գլանաձև) մետաղյա շապիկից և նրա մեջ լցրած վորե բանկվող նյութի (որինակ՝ անծուխ վառողի) և արսիններից մեկի (որինակ, դիֆենիլքլորարսին, կամ ավելի լավը՝ դիֆենիլամին քլորարսին) հետ մամլած խառնուրդից: Այսպիսի մոմերն արձակում են թունավոր ծիխ խիտ ամպեր: Քանի վոր կարելի ե լինում այսպիսի մոմերի միջով Թ. Ն.-ը հեշտությամբ տեղափոխել, հապա բուրովին միտք չկա ոգտվել, նույնիսկ հեշտ կերպով փոխադրվող խըտացրած քլորով ու ֆոսգենով լցրած բալոններից: Թ. Ն.-երը կարողեն գործածել թե հետեւակ և թե ձիավոր զորքը, վորպես հենց թունավոր ծուխ տվող մոմեր, վորպես ձեռքի ոռւմբեր ու հրացանաձիգ գրանատներ: Առանձնապես մեծ չափով վործ ե զնելու հե-

տեսակ զորքը իրանց համար ծխի վարագույրներ պատրաստելու և իրանց աեղը քողարկելու նպատակի համար:

Պայթեցնող տեխնիկան նույնպես Թ. Ն.-ի ոգությամբ կհարստանա կովկելու մի նոր յեղանակով։ Չափազանց մեծ դեր են խաղալու, աանցյալ պատերարմում դեռ ևս վոչ լայն չափով գործադրված, քիմիական ֆուղամաները։ Սրանց ոգնությամբ կարելի կլինի համաշափ ու խնայողությամբ թունավորել լքած տերիտորիայի մեծ շրջաններ։ Պայթեցնող զորամասերի վրա և ընկնելու նաև զանազան ձևի քիմիական ռդժոխային մեքենաներով։ Լքյալ խրամատները, փոսերը, բնակարանները թունավորելու պարտականությունը։

Արտիլերիան պետք է համարյա բացառապես քիմիական ոռումբեր գործադրեն։ Դեռ անցյալ պատերագմի վերջերին գերմանական հրետանու ոռումբերի 50-60-տոկոսը բաղկացած եյին քիմիական ոռումբերից։ Գերազող յեն լինելու դիմացկուն գաղերը, այսինքն այնպիսինները, վորոնց ազդեցությունը ավելի յերկարած և լինում։ Այդպիսինների թվին են պատկանում իպրիտը, լյուիզիտը, մի քանի արսիններ և մի քանի արցունքաբեր գաղեր։ Խեղող և մի քանի այլ թունավոր գաղերը համեմատաբար ավելի սակավ զեպքերում են գործադրվելու, որինակ, յերբ ոմբակոծելուն անմիջապես հետեւելու և սեփական հետեւեկի առաջինացումը, կամ յերբ կարիք և զգացվում խեղդիչ ծխի ոգնությամբ ստիպել թշնամուն հանել իրանց հակագերը։

Դիմացկուն գաղեր պարունակող քիմիական ոռումբերը միաժամանակ կունենան և բրիզանա հատություններ, վորովհետև գտել են, վոր Թ. Ն.-երը ամե-

7/11.1922

նից լավ ներկայական թագավորական այն դեպքում, յերբ ոռումբերի մեջ թուն պարունակության 50-60-տոկոսը պայթուցիկ նյութեր լինեն։ Միայն այս պայմաններումն ե, վոր իպրիտը կփոշիանա և կտա «մառախլապատություն», վոր սովորական իպրիտային գոլորշացումիցն ավելի թունավոր ե։ Պինդ արախների, որինակ, դիմենելցիանարսինի և դիմենելամինքրասինի համար հարկավոր կլինեն վոչ միայն ուժեղ պայթուցիկ նյութերով լիցք (չարձ), այլ և հարկավոր կլինի, վոր այդ Թ. Ն.-ըը նախապես ջերմացնող խառնորդի ոգնությամբ ոռումբը դուրս թոչելու ժամանակ վառվող նյութով հալեցվի։ Այս կերպ ստացած դիմենիւսմինքրասինի մառախուղը աչքի թաղանթի վրա ազգում ե արգեն  $\frac{1}{30,000,000}$  կենտրոնացումով։ Արտիլերյայի համար բնավ միտք չունի ուրիշ ոռումբեր գործածելը, վորովհետև քիմիական ոռումբն իր մեջ միացըրած կլինի թունավոր գործողությունը սաստիկ ըրիզանտի հետ։ Մեր այս ասածը վերաբերվում է ամեն տեսակ ոռումբերին, նույնպես և շրապնելին, վորովհետ գնդակների արանքում մնացած տարածությունը կարելի յել լցնել Թ. Ն.-ով։

Ամեն տեսակի զորքերն ել կարող կլինեն գործածել այդ Թ. Ն.-ը։ Արանցով կողտվեն թանքերը վորպեսզի իրանց շրջապատելով ծխի ամպերով թագնվեն թշնամուց և դժվարացնեն նրանց հրետանու կրակը, կըգործաւըրեն նաև թե սարշրյա և թե ծովային նավատորմիզները։ Նավատորմիզը կողտվի թե վորպես ծխային ծածկոց և թե չորպետ թունավոր գաղեր, վորոնք թափանցելով թշնամու նավի բոլոր մասերը վիճակիցին սիստեմի միջով, շնչահեղ կանեն ամբողջ ավագագմին, կամ կստիպեն նրանց հակագաղեր հանգ-

նել, վորը և զգալի կերպով կդժվարացնի նավի վրա գործողների աշխատանքները:

Բացի դրանից, բոլոր ժամանակակից զորաբանականերում մտցրել են գաղացիրների և ականացիրների հատուկ զորախմբեր: Այս զորախմբերը, վորոնց յերեմն կոչում են գաղացին զորքեր, զործ են ածում զանազան կալիբրի գաղացիր կոչվող առանձին թնդանոթներ: Անցյալ պատերազմում գաշնակիցները գործ ելին ածում Ստոկսի չորս դյուիմանոց, Լիվենսի 8 դյուիմանոց գաղացիրներ: Նման գաղացիրները գործ ելին ածում նաև գերմանացիները: Այս թնդանոթները պողպատի հասարակ խողովակներ են, վերջերս նաև ներսում միջագծերով, վորոնք նետում են մինչև 10-15 կիլոգրամ թ: Ն. պարունակող գաղացին ականներ: Ներկա գաղանետերի հեռածղությունը հասնում է 3000 մետրի: Մի քանի գաղացիրներ միանալով կազմում են մի մարտկոց (բատարեյ) և համազարկերը կատարում են միաժամանակ ելեկտրական վառիչների ոգությամբ:

Այժմ բոլոր զորաբանակներում աշխատում են գաղացիրների կատարելագործելու վրա, վորոնք չափազանց ոգտակար են միջխրամատային տարածությունները թունավորելու և սեփական զծից հեռու բարձր կենտրոնացումով գաղացին ամպեր առաջ բերելու համար: Գլխավորագետ ուշը և գարձգում նրանց ծանրությունը պակասեցնելու, արտգացնելու ստրենը, մեծացնելու հեռաձգությունը և ավելացնելու արագաձգությունը: Ապագա պատերազմում այդպիսի տեղափոխվող (պորտատիվ) գաղացիրներն յեն մեծ դեր խաղալու:

Բայց ամենից առավել և ամենից ճիշտ կերպով սավանակներն ու հիդրոպլաններն են վոր պիտի գործադրեն թ: Ն.-ը:

Հանձինս սավառնակի թ: Ն.-երը իրանց գործադրության արժանի միջոց կը գտնենք: Ծումբակիը սավառնակը հնարավորություն կտա այնպիսի հեռաձգության, վորի մասին ամենավառ յերեակայություն ունեցող թնդանոթածիզն անգամ յերազել չի կարող: Իրոք, ուրմբերով զինված ներկայիս հսկա ողանավը իրանից ներկայացնում և անյերեակայելի հեռածիզ մեծ կալիբրի թնդանոթ:

Անցյալ պատերազմում ողանավային տեխնիկան դեռ իր արժանի բարձրության վրա չեր կանգնած, գործողության շրջանը դեռ անբավարար եր և բեռնակիր ուժը մեծ չեր, այդ պատճառով ողանավերը ոմբակոծության նպատակների համար քիչ ելին գործադրվում: Ներկայումս ունենալով 800 և ավելի կիլոմետր գործնեռության շրջան, 5-10 տոն (300-600 ֆութ) թ: Ն.-ով ու պայթուցիկ ուրմբերով բեռնավորված ողանավերը կարող են ոմբակոծել թշնամու թիկունքում խորը ընկած տարածությունները:

Քիմիական ողային զենքը վերացնում ե պատերազմի մասին մինչև այժմ յեղած բոլոր հին ըմբռնումները: Առաջ սահմանում ելին ճակատի (Փրոնտի) ուղագմական զիծ, պաշտպանելու այն ամենը ինչ վոր գտնվում եր թիկունքում: Հակառակորդի ամբողջ ջանքըն ուղղված եր թիկունք անցնել խորտակելով այդ պաշտպանողական զիծը, կամ թևերի կողմից աննկատելի կերպով: այժմ այդպիսի սահմանած ուղագմակիծը հազիվ թե նշանակություն ունենա, նա վոչ մի բան չի կարող պաշտպանել վորովհետեւ ամենելին կարիք չի զգացվի ուղագմածակատի թիկունքում ընկածներին հասնելու համար ուղագմածակատը պատռելու:

«Մազմազաշերի» սահմանները լայնարում են անսահման կերպով: Լայնացնելը կախված կլինի ողա-

նազերի հեռու թռչելու ունակությունից: Ռազմադաշտերը կտարածվեն կովող կողմիրի ամբողջ յերկրի վրա: Պատերազմող զորքի և խաղաղ բնակիչների մեջ յեղած պարզ տարրերությունը կշքանա, վորովհետեւ ամեն մի քաղաքացի, վորտեղ նա գտնվելիս լինի, յենթակա կլինի հարձակման վտանգին:

Մարշալ Ֆոշն այս առթիվ սուսմ և հետեւալը՝ «Որ որքա վրա մեծ բեռ վերցնելու ընդունակ դարձող ողանավերը, միջոց են տալիս մեծ քանակությամբ թունավոր նյութեր ցրելու, ամբողջ զորաբանակներ թունավորելու և ամբողջ շրջաններ անմարդաբնակ դարձնելու համար: Քիմիական պատերազմը հանձննա ողանավի, միջոց և գտնում հակայական տարածության վրա ահ ու սարսափ տարածելու»: Ոգանակը, վոր անցյալ պատերազմում ծառայել և միայն, գլխավորապես հետախուզական և գիտելու նպատակների համար, այժմ ցամաքի ու ծովի վրա դառնում և զրոհամար ու պաշտպանության ամենակարևոր գենքը: Ցամահի ու պաշտպանության ամենակարևոր գենքը:

Հավատորդիթի ու խաղաղ ազգանաքայի մեծ մղած պատերազմում ողանավի կործանարար, ոչնչացնող հիմնական միջոցը լինելու և Թ. Ն.-ը, վորոնետեւ շնորհիվ իրանց 2-10 որ բաց աեղերում և 6-30 որ քաղաքներում և ընդհանրապես փակ բարձրում ունեցած ներգործման տևողականությանը, վայրերում ունեցած գաղափարների ուղամաքանությանը, շատ ու շատ անզամով բարձրացնում են ողանավով տարբող զինվորական ընեների սազմական արժեքը:

Ողանավերը կոմբակոնեն թե վորք և թե ահագին մեծություն ունեցող քիմիական ոռումբերով: Սրանից մի տարի առաջ փորձեր կտարարվեցին 2 տունանոց ոռումբերով: Ներկայումս շինվում են 5 տունանոց ողանավային ոռումբեր: Այս ոռումբերի պառանակած զանգվածի քաշը 40-50 տոկոսը կազմված է

քիմիական նյութերից: Այսպիսի մի ոռումբ հերկվ կը լինի չափազանց մեծ կենտրոնացումով գազային ամպ ստեղծելու համար, վորի գեմ հազիվ թի կարող լինեն գործնական նշանակություն ունենալ ներկայումս յեղած հակագաղերը: Ֆրայսի կատարած հաշիվների համաձայն 2 տոնանոց իպրիտային ոռումբը պայթելիս թունավորում է 140,000 քառ. մետր տարածության գոտի: Այս տարածությունը կարելի կլինի ավելի ևս մեծացնել ողանավային մասը ոռումբերի գործածությամբ: 2 տոնանոց իպրիտային ոռումբը ստեղծում է այսպես կոչված, իպրիտային մառախչապատություն, վորի ուղմական ազգեցությունը տասն անգամ ավելի բարձր կլինի իպրիտի սովորական գոլորշիացումից:

Ընդգրածակ յերկրամասեր անանցնելի դարձնելու անհրաժեշտության դեպքում, որինակ թշնամու նահանջը կորելու կամ սեփական զորաթերեր պաշտպանելու, թշնամու հիտապնդումը խանգարելու և նման այլ գեղքերի համար ողանավերը ցրիվ կտան փոքր կալիբրանոց ոռումբեր: Այդպիսի ցրումներ պետք ե կատարվեն համաշափ կերպով, նախապես կազմած ծրագով ցրելով վորոշ քանակով նյութեր յերկրի վորոշ տարածության վրա: Այս դեպքում, ի հարկե, կը գործադրվեն բացառապես դիմացկուն գազեր: Թ. Ն.-եր կարող են սփոել նաև հասարակ շաղ տալու միջոցով (միայն վոր մեծ բարձրություններից), ըստ վորում խողովակից ծորող հեղուկը կը փոշիանա ողանավի հենց իրա շաժմելու միջոցով: Վորևէ զոտի թունավորելու գործողությունը զեկավարող անձը պետք ե խստիվ հետեւի թ. Ն.-ի համաշափ տարածելուն, առանց պահանջ լինելու վոր ամբողջ յերկիրը անխստիր ու ամբողջապես թունավորմի:

Այն աեղերում, ուր հնարավոր ե, գետինը թու-

նավորելը կարելի յե կատարել նաև քիմիական ֆուզիաներով:

Ներկա հոդվածի ծավալը մեզ թույլ չի տալիս մանրամասնությանց մեջ մտնելու: Մենք այստեղ աըվինք Թ. Ն.-ըի տարածման ներկայումս գործադրվող միջոցների համառոտ տեսությունը միայն նրա համար, վորպեսզի ավելի ցայտուն կերպով ընդգծած լինենք այն հիմնական միտքը, թե ապագա պատերազմը բոլորովին նման չի լինելու անցյալ պատերազմին և այն, վոր այդ պատերազմում գլխավոր գերը պատկանելու յե քիմիական գենքին, վորը պետք ե գործադրվի ամեն տեսակի զորամասերի կողմից հակայական հանակուրյամբ: Հենց Թ. Ն.-ի այդախիմ մասսայական գործադրույան մեջ ե կայանալու նոր զենիք ուժն ու վրանգավոր լինելը:

### ՀԱՄԱԳԻԱԼԻՉԱՅԻՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հենվելով վերև արտահայտած մեր տեսակետի վրա, պետք ե վերագնահատաման յենթարկել զանազան պետությունների զինվորական ուժերը: Ամենից բարենըպաստ վիճակի մեջ կդառնվին բարձր զարգացման հասցըց քիմիական արդյունաբերությունը, վորակյալ քիմիական գործավորների մեծ կարը, ժամանակին համապատասխան ողանավային զարգացած արդյունաբերություն ունեցող յերկրները:

Այս տեսակետով, անցյալ պատերազմում ձնշող առավելություն ուներ Գերմանիան: Բայց նա չկարողացավ ոգտագործել իր այդ կերականցնությունը, կատարելով զագերի գործադրության զեազերում բոլորիս

հայտնի ստրատեգիկ, տակտիկական և տեխնիկական սխալները: Ներկայումս Գերմանիայի տրամադրության տակից դուրս ե յեկել Մերձհռենոսյան շրջանում գտնվող քիմիական հսկա արդյունաբերությունը:

Այդ արդյունաբերության վերահսկողությունը (կոնտրոլ) գտնվում է Ֆրանսիայի ձեռքում, վորը սաստիկ լարված աշխատանքներ ե տանում իր յերկուում ևս քիմիական խոշոր արդյունաբերություն կազմակերպելու համար: Այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ ե կատարվում նաև Անգլիայում, իսկ առանձնապես մեծ աշխատանքներ են տարվում Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Պատերազմից հետո շատ բան գրվեց բոլոր յերկրներում կատարվող քիմիական արդյունաբերության մասին: Շնորհիվ միջդաշնակց. գործներության, նրա հրատարակած հաշվեավությունների, այդ հաշվեավությանց վրա հիմնված լըփերյուրի և գեներալ ֆրայսի հրատարակած գրքերը բավականին մանրամասն պարզում են Գերմանիայի զինաքիմիական կազմակերպությունը, վորը զինավորապես հենված և Interessen—Gemeinschaft տրեստի վրա, վորն իր շուրջն ե միացնում Գերմանիայի բոլոր քիմիական-ներկերի արդյունաբերություններին: Այդ տրեստի գործարանների մեծ մասը, մասնավորապես Լյուդվիգսվագենի, Լիվերկուլենի և Հեխտեյի գործարանները գտնվում են ֆրանսիական ոկուպացիոն գոտում: Հետեւապես զեռ հայտնի չե, թե պատերազմի զեազում ով ե ոգտվելու քիմիական այդ խոշոր արդյունաբերությունից:

Պատերազմի վերջերին, Ամերիկայի Միացյալ Նահանգները զինվորաքիմիական արդյունաբերություն կազմակերպելու գործում յեռանդուն աշխատանքներ հայտ բերեց: Եջեկուտի զինանցում (արսենալ) ստեղծվեց զինվորա-քիմիական մի ամբողջ քաղաք, մի շարք

բազմապիսի արդյունաբերություններով, փորձնական լարուատորիաններով, պողիգոններով, գազային դըպ-րոցներով, և այլն, Վաշինգտոնի կոնֆերանսի վորոշումը իրագործել ձեացնելով, միայն առյերեւույթ կերպով և կատարվել այդ զինանոցի զինաթափությունը։ Սակայն իրոք, Եջուգի զինանոցը գտնվում է կատարյալ ուղղմական պատրաստության մեջ, վորպիսի դրությունը ամերիկացիներն իրանք ել չեն թագցնում։ Պատերազմ հայտարարելու հենց սկզբին, ամենակարձ միջոցում Եջուգի զինանոցը կարող կըլինի որական արտադրել 100 տոն իպրիտ և հնարավորություն կունենա հետագայում ել ընդարձակելու այդ արդյունաբերությունը։ Յեթե ինկատի առնենք, վոր Գերմանիան իր քիմիական ամբողջ հսկայական արդյունաբերությամբ պատերազմի վերջերին արտադրելիս և յեզեղել միայն 40 տոն իպրիտ, հաստ հասկանալի կըլինի Ամերիկայի կատարած նվաճման մեծությունը այդ ասպարիգում։ Բայց գեռ Հյուսիսային Ամերիկայի Միացնահանգների ամբողջ արտադրությունը այդ չե։ Պետք է կարծել, վոր Ամերիկայի Միացյալ Նահանգների քիմիական գործարանների իպրիտի արտադրությունը պատերազմի դեպքում արագ կերպով կըհասցնի որեկան 300 տոնին։ Նկատի առնելով ներկայումս Թ. Ն.-ի ինսյուլությամբ տարածելը, ամենքին հասկանալի կըլինի, թէ ի՞նչ են նշանակում այդ թվերը։

Բայց Ամերիկայի զինվորա-քիմիական արդյունաբերությունը միմիայն իպրիտով չի սահմանափակվում։ Գործարանները ուղղմացման դեպքում, Եջուգի զինանոցի անմիջական զեկավարության ներքո կըդործեն մի շարք խոշորագույն քիմիական ձեռնադկություններ, ինչպիսիներն հն՝ „Comp. Electro-Chimical Oldbury“-նը (Փոսդեն) „Midland“ գործարանները (արցունքաբեր), „Charleston W“-ի գործարանները (իպրիտի հում

նյութեր), „Buffalo“ գործարանները, (իպրիտ), „Croydon“-ի գործարանները (լյուիլիտ, արսիններ), „King'sport“-ինը (արցունքաբեր), „Stamford“-ինը (քլորպիկրին), „Hastings on Hudson“-ինը (իպրիտ) և այլն։ Կարելի յեն նախատեսել, վոր ուղղմացման դեպքում Ամերիկայի Միաց։ Նահանգներում Թ. Ն.-ի ընդհանուր արտադրությունը կհասնի ֆանտաստիկ թվերի։ Վորպեսզի կարողանա այդպիսի հզոր, բայց ներկայումս չգործող ուղղմական զինանոցները պահած լինի, ակտությունը մի շարք միջոցներ և ձեռք առնում ոգնելու խաղաղ ժամանակի քիմիական, գլխավորապես ներկերի, արդյունաբերությանը։

Ի գեղ և ասել, վոր հետազոտությունների աշխատանքը Անգլիայում գրված և հրաշալի հիմունքների վրա, բայց Ամերիկայից ավելի պակաս հաջողությամբ։ Անգլիական քիմիկոսները մի շարք հաջողություններ ևն ունեցել իպրիտի հատկություններն ու գրա արտադրության մեղոթների հետախուզության գործում։ Այսպիսի կարևոր հաջողություններից մեկը պետք է համարել Դուռը մեթոդով դիմացկուն, չքայքայվող իպրիտ ստանալը, վորն իր մաքրությամբ մոտենում և գերմանական զգալիապիս ավելի բարդ (Մեյյերի) արտադրության յեղանակով ստացած իպրիտին։ Ինչպես հայտնի յեն, գերմանացիները շնորհիվ այն ըանի, վոր իպրիտը պատրաստում եյին 4 ֆազային Մեյյերյան յեղանակով, չնայած նրանց ունեցած հսկայական մեջոցների, չկարողացան մի անգամից ուղղմանակատ ուղարկել բավականաչափ թ. Ն.-ը։ Դաշնակիցները իպրիտն արտադրում եյին ավելի հասարակ յեղանակով՝ քլորի ծծմբուկը յենթարկելով ետիւնի աղդեցության։ Դերմանական արտադրած նյութի գերազանցությունը, վորը մնում է մինչև վերջին ժամա-

Նակներս ել կայանում ե նրանում, վոր գերմանական խլրիտը զգալի կերպով ավելի մաքուր եր, համարյա անհոտ, ուներ ավելի ուժեղ աղղեցություն, դժվար եր նրա տեղը յերեան հանել և վոր ամենագլխավորն ե, չափազանց գիմացկուն լինեն եր: Անզլիական քիմիկոսների ջանքերը, վերջին ժամանակներս ուղղված են դեպի այն, վոր պահպանելով արտադրության պարզ ու հասարակ ձեր, վոր ապահովում ե արտադրականության մաքսիմումը և եժանությունը, կարողանան ըստանալ վորակով լավ սթերք:

Բացի այդ, մի շարք գյուտեր են արված, վորոնց մասին խոսելը դեռ վաղաժամ ե քանի վոր դեռ գործնականում ստուգման չեն յենթարկվել: Անզլիայի ունեցած արդյունաբերական հնարավորությունները շատ պակաս են ամերիկականից: Դրա Dyestoff Corporation ներկերի արտադրությունը չնայած պետական լայն ոժանդակության գանգում ե անկյեալ գրության մեջ:

Ցեվրոպական հորիզոնի վրա այժմ ծագում է մի նոր զինվորա-քիմիական աստղ: Դա Ֆրանսիան է: Մինչեւ պատերազմը Ֆրանսիան ուներ բավականին թույլ քիմիական արդյունաբերություն: Այժմու ելզասում գտնված գերմանական քիմիական գործարանների բռնագրավումից հետո, իրեն «կոնսորչի» հետեանք, ոգտվելով մի շարք գերմանական քիմիական գաղտնիքներից, փաստորեն տեր դառնալով Մերձնենույան գերմանական արդյունաբերությանը, Ֆրանսիան կարող է մայր ցամաքի ամենազորեղ զինվորա-քիմիական պետությունը համարվել: Իր սիփական քիմիական պերսոնալի քանակության և փորձառության պակասը լրացնում ե ոտարազգի քիմիկոսներով, վորոնք հաճույքով զնում են Փրանսիացիների մոտ աշխատելու իրանց նյութական անապահովության պատճառով:

Կազմակերպիչ գլխավոր կենարոնը հանդիսանում է „Compagnie National des matières colorantes et produits chimiques“-ը: Այս ընկերությունն իր ձեռքի տակ ունի Willers St. Paul-ի մոտ յեղած գործարանները 45000 քառ. մետր տարածություն բռնող շենքերով և Ռուանի մոտ գտնված Oisel-ի գործարանը մոտ 40000 քառ. մետր տարածություն բռնող շենքերով: Գործարանները կատարելապես ժամանակակից են և պատրաստում են զանազան կիսամշակ (պրոմեջուուն) մթերքներ և ներկեր: Բացի գրանից, այդ ընկերությունը միացած են և կիոնում յեղած „Companie Parisienne de couleur d'aniline“ և „Manufacture Lyonnaise de matières colorantes“ գործարանները: Մյուս քիմիական ձեռնարկությունների մեջ ել այս ընկերությունը մասնակից ե հանդիսանում:

Յրանսիական քիմիական մյուս խոշոր կենարոնն ե հանդիսանում „Société anonyme de matières colorantes et produits chimiques de Saint-Denis“-ը, Մյուլհայմի նորույնում, „Société chimique de la grande Paroisse“ և ուրիշները:

Այս գործարանները արդեն ի վիճակի յեն բավարարելու Ֆրանսիայի ներկերի ամբողջ պահանջի 80 տոկոսը և մոտ ապագայում իր արտադրությունը կը հասցնի 100 տոկոսի: Պատերազմի դեպքում այդ գործարանները կը փոխվեն թ. Ն. պատրաստելու կենարոնների ու հենց սրանց զեկավարության տակ ել կաշխատեն նաև Մերձնուսույան գերմանական գործարանները:

Սակայն սիսալ կը լինի կարծելը, թե բավական և ունենալ ներկերի բարձր զարգացման հասած արդյունաբերություն, վոր մեծ չափերով թ. Ն.-եր կարելի լինի պատրաստել: Ներկերի արդյունաբերությունը

Ներկայումս պատերազմ վարելու համար անհրաժեշտ բարդ քիմիա-արդյունաբերական ամրող շղթայի միայն գլխավոր ողակն և հանդիւանում: Բացի դրանից, ետակական մեծ նշանակություն ունեն նաև մաքսիմալ չափով գործադրվելիք թ. Ն.-ի արտադրելու մեթոդները: Դաշնակիցները գերմանականից ավելի թույլ քիմիական արդյունաբերություն ունենալով հանդերձ, կարողացան նրան համեմ և նույնիսկ անցնել շնորհիվ հենց այն բանի, վոր արտադրության ավելի պարզ մեթոդներ գործադրեցին:

Պետք է ի նկատի առնել այն հանդամանքը, վոր անցյալ պատերազմում թ. Ն.-ի համեմատարար չնշին արտադրությունը պետք է վերագրել գաղեր տարածելու անհամապատասխան մեթոդներին: Պատահել են դեպքեր, յերբ պատրաստի թ. Ն.-ով լցնելու համար բավականաչափ ուժմբներ չեն յեղել: Յեվայդ հասկանալի ե յեթե ուշադրության առնելու լինենք, վոր թ. Ն.-ը ամենից շատ գործադրվում ենին հրետանու ուսւմբերում, վորոնք պարունակում ենին իրանց քաշի 10 տոկոսը թունափորող նյութեր: Լայն մասշտաբով գաղացիների (ըստ քաշի 50 տոկոսը), քիմիական ֆուգասների, թունավոր մոմերի և ոդանավային ահագին ուսւմբերի (70—80 տոկոս) գործադրությունը լուլուրովին կը փոխի գործի պատկերը: Կարիք չի զգացվել թանկարժեք մետաղի ամրող հանգեր սփռելու ուազմադաշտերում: Կարելի կը լինի հազարավոր տոն թ. Ն.-ը համաչափ կերպով ցրել անհամեմատ ավելի եժանագին միջոցների ոգնությամբ: Հետեալես կարելի կը լինի լրիվ թափով զագեր արտադրել առանց վախճանու, թե իսկույն և յեթ չի կարելի դրանց ոգտագործել: Յեվ քանի վոր այդ այդպես և, ի հարկե, ըստու գինվորական պետությունները լուրջ ուշադրություն

պետք ե դարձնեն թ. Ն.-ի մասսայական արտադրության վրա: Եթա համար ինչպես վոր ընդունված ե կարծել ունաբավարար են ներկերի, դեղերի, լուսանկարչական և պարփյումերիայի մթերքների արդյունաբերության զարգացումը: Հարկավոր ե քիմիական ինդուստրիայի ամբողջական լայն ցանց ունենալ, ոկսած հում նյութերից և վերջացրած բարդ քիմիական մթերքներով:

### ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայթուցիկ նյութերը բացի թնդանոթային ոչ ականակիր գործում կատարած իրանց սովորական գերից, պատերազմի ժամանակ կատարելու յեն նաև թ. Ն.-ը փոշիցնելու դերը և ծառայելու յեն ոդանավային մանր ու խոշոր կալիբրանոց ոումբերի ոդանությամբ մեծ չափերով ավերածություններ կատարելու համար:

Հետեալես, ամեն տեսակի պայթուցիկ նյութերի մասսայական արտադրության հարցը հանդիսանում ե կատարեկապես այժմեական: Վերջերումս պայթուցիկ նյութերի տեխնիկան մեծ առաջադիմություններ չի կատարել: Մնում են ելի նույն անծուխ վասուգը հրացանաձգության համար ելի նույն արոտին ու պիկրինյան թթուն, ոումբերի ու ականների լիցքի և դարձյալ նույն պայթու ցիկ սնդիկը վորպես հանրամերձ պայթուն առաջ բերող (գետոնատոր): Կատարեկապուրծումը գլխավորապես վերաբերում ե պիկրինյան թթվի ու արոտիլի արտադրության մեթոդների պարզեցնելուն և եժանցնելուն: Ականային գործում բավականին լայն չափերով տարածվել ե հեղանիստողիքնելամինը (հեկղիլը), վորն սատագում ե զիֆենիլամինի նիտրումից: Այս պայթուցիկ նյութը 30—40 տոկոս արոտիլի խառնուրդի հետ

ծառայում ե սառջրյա տկանները և տորպեզները լցնելու համար, վորոնք հասարակ տրամադրից ավելի մեծ ուժով են պայթում: Վորպես պայթյուն առաջ բերողներ, բացի պայթուցիկ սնդիկից, ներկայումս գործ են ածվում նաև սնդիկի աղիտը և տետրանիտրոմետիլանիլինը (տետրիլ), վորը չափաղանց զորեղ պայթեցնող հատկություն ունի: Այդ նոր նյութերի արտադրությունը, հիմնական հում նյութեր ունենալու գեպքում, առանձին դժվարության չի հանդիպում: Անձուխ վասողների և ընդհանրապես զանազան ուժանակների (դինամիտ) արտադրությունը կարիք ունի բամբակի, գլիցերինի և նիտրելու թթուների, Բամբակի պակասության դեպքում, բամբակը կարելի յե փոխարինել բնափայտի ցելյուզով, ուստի և խաղաղ ժամանակ պետք ե աշխատել յերկրում մաքսիմալ չափով զարգացնել զրա հետ կապ ունեցող բամբակի ցելյուլոիդի ինդուստրիաները և այլն:

Գլիցերնի անհրաժեշտությունը պատերազմի ժամանակ վորոշվում ե վոչ միայն պատրաստվելիք ուժանակների ու վասողների քանակությամբ, այլև զործադրվող վառողի տեսակով: Ներկայումս տրամադրություն կա պակասացնելու նիտրոզլիցերինի տոկոսային պարունակությունը, վորը բալիստիների մեջ հասնում ե միայն 50 տոկոսի: Չնայելով վոր նիտրոզլիցերինի վրա հիմնված վասողները կարող են մասամբ փոխարինել սուրբուզատներով (ավշակի բորակատի վրա հիմնված անծուխ վասողներ), Բայց և այնպես պատերազմի ժամանակ պահանջ կզգացվի մեծ քանակությամբ նիտրոզլիցերինի:

Դորձնական արվեստական միջոցներ գլիցերին պատրաստելու համար գեռևս չկան: Գերմանիայում ամսեկան մոտ 1000 տոն գլիցերին և պատրաստվել

շաքարի հատուկ ֆերմենտացիայի միջոցով: Այս պրոցեսը բարդ է, ստացված գլիցերինը քիչ, այնպես վոր պահանջվում է մեծ քանակությամբ շաքար: Միայն հուսահատական դրությունը կարող կը լինի ստիպել վորեւ յերկրի դիմելու գլիցերինի արտադրության այդ միջոցին:

Հետևապես մեռմ յեն զանազան տեսակի ճարպերը: Պետք ե խոստովանել վոր ներկա զինվորական պետությունների «ճարպային քաղաքականությունը», չնայած անցյալ պատերազմի դառն փորձին այնքան ել արմատական չեւ: Մի շարք սապոնի գործարանների մայր լուծվածքներից գլիցերին չեն հանում, զանազան որգանական մնացորդներ (տականքներ) եայլ բուսական սերմեր չեն ոդտագործում գլիցերին ստանալու նպատակով: Այնինչ այդպիսի ինդուստրիաներից շատերը կարող են իրանց գոյությունը պահել և խաղաղ ժամանակ:

Բլոկադի գեպքում, գլիցերինի պաշար չունեցող յերկիրը ստիպված կը լինի չափաղանց աննպաստ պայմաններում սկսել իրեն անծանոթ արտադրության ուսումնասիրելուն ու կառուցանելու: Եթերի հարպային սրեթեսության բայինալ կառուցաներ պետք է մտնի յերկրի պատրաստությունը յեվ պատերազմական նախապատրաստությունների վարող որգանների իրավասության մեջ: Բացի դրանից ամեն մի գինվորական պետություն պետք ե ունենա գլիցերինի բավականին պաշար, վորը համենայն դեպքում կարողանա բավարել պատերազմի առաջին ամիսների պահանջներին:

Պայթուցիկ նյութեր արտադրելու համար հիմնական գլխավոր նյութերն յեն նիտրելու համար գործածվող ծծմբային և բորակածնային թթուները:

Ծծումբի ու պիրիտի մեծ պաշար ունեցող յեր-

կարգի բերվեց Ոստվալդի և Ֆրանկ-Կարոյի մեթոդով  
բորակային թթվի արտադրությունը, վորը կայանում  
և կատալիտիկ միջոցով ավշակի թթվացման մեջ: Դրա  
համար անհրաժեշտ ավշակը ստացվում եր գլխավորա-  
պես սինուեթիկ միջոցով ջրածնի ու բորակածնի միա-  
ցումից պրոֆ. Գաբրելի պլոցեսսի համաձայն և կալցիի  
ցիանամիզից ջլի գոլորշու ազդեցությամբ: Ստացած  
բորակային թթվի մի մասը ծառայում եր նիտրե-  
լու խառնուրդ պատրաստելու համար, իսկ մյուս մա-  
սը՝ ավշակի բորակածնատ պատրաստելու, վորը հիմ-  
քըն և կազմում, այսպես կոչված, անվտանգ պայթու-  
ցիկ նյութերի (չնեյդերիտ, ամմոնալ և այլն): Մթնո-  
լորդային բորակածինը շահագործող Գերմանիայի 14  
մեծ գործարանները կարող են տարեկան 200,000 տո-  
նից ավելի սինուեթիկ ավշակ պատրաստել: Դու չհաշ-  
ված ավշակի ծծմբատը, վոր մեծ քանակությամբ ըս-  
տացվում և լուսավորության գազ և կոկս պատրաս-  
տող գործարաններից:

Ներկայումս ազոտային նյութերի համաշխարհա-  
յին արտադրությունը արտահայտվում և ըստ ազոտի  
միավորության հեաեյալ թվերով՝

Չիլիի բորակ (սելիտրա) . . . . 500.000 տոն.

Սինուեթիկ պլոցեսսներ . . . . 675.000 »

Ածուխի գիստիլացիայի պլոցեսսներ 423.000 »

Գերմանիայի ազոտային նյութերի արտադրու-  
թյունը կազմում է համաշխարհային արտադրու-  
թյան 72 տոկոսը և պահանջի 50 տոկոսը:

Հիմա արդեն բոլոր յերկիրների համար հասկանա-  
լի և ինդրի կարեռությունը և բոլոր յերկրներն եւ  
մանավանդ զինվորական յերկրները, իրանց մոտ զար-  
գացնում են սինուեթիկ ավշակի և կալցիոնի ցիանա-  
միզի արտադրությունը:

կիրները կարող են ծծմբաթթվի կողմից բոլորովին  
հանգիստ լինել. Նրանց մնում և միայն հոգալ, վոր  
պահպանվեն կամ կառուցանվեն նոր գործարաններ  
ծծմբային թթուն կենտրոնացնելու և ծխացող ծծմբա-  
յին թթու արտադրելու համար, վորոնք գործ են ած-  
վում վոչ միայն պայթուցիկ նյութեր արտադրելու,  
այլև ծխային վարագույրներ առաջացնելու համար.  
հարկավոր և նույնական, վոր նախորոք հավաքվեն պլա-  
տինի և ազբեստի պաշար, վորոնք անհրաժեշտ են ար-  
տադրության կատալիտիկ պրոցեսսների համար:

Այն յերկրները, վորոնք չունեն ծծումը ու պի-  
րիտներ ծծմբային թթու ստանալու համար պետք է  
դիմեն ուրիշ զանազան միջոցների: Այդ միջոցները  
ամեն մի յերկրի համար կը ում են անհատական բը-  
նույթ և կախված են ձեռքի տակ ունեցած հում նյու-  
թերից: Որինակ Գերմանիան, յերբ անցյալ պատե-  
րազմում ծծումբի ներմուծումը դադարեց, ծծմբային  
թթուն ստանալու եր բլենդից (ցինկի ծծմբուկ՝ հանք),  
իսկ պատերազմի վերջերին՝ նաև դիպսից, Լիվեր-  
կուզենում յեղած Բայեր ընկերության գործադրած  
հատուկ մեթոդի համաձայն:

Բորակածնային թթվի ինդիրը որգանապես կապ-  
ված է մթնոլորդային բորոկածնի շահագործման խնդրի  
հետ: Պատերազմի գեպքում շատ յերկրներ կարող են  
կարգել բորակի (սելիտրայի) բուն աղբյուրից և ընկնել  
այնպիսի զրության մեջ, ինչպիսի գրության մեջ վոր  
ընկավ Գերմանիան անցյալ պատերազմի ժամանակ: Վեր  
շինս շատ փայլուն կերպով դուրս յեկավ այդ գժվարին  
կացությունից շնորհիվ իր քիմիական զորեղ արդյուն-  
աբերության և նոր քիմիական—արդյունաբերու-  
թյուն կազմակերպելու և կառուցանելու ունեցած իր  
փորձառության: Շատ կարճ միջոցում Գերմանիայում

Կուլտուրայի արդի պայմաններում ազոտային բաղադրությունները հսկայական դեր են խաղում խաղաղ արդյունաբերության զանազան ճյուղերում։ Ավշակի ծծմբատը, ազոտային թթվի աղերը և կալցիի ցիանամիջը ծառայում են վորպիս արվեստական պարարտացման միջոց, ներկերի արտադրության, գեղերի, արվեստական գործվածքների, պարֆյումերիայի և այլ նման բաների համար։ Ազոտը մանում է շատ թ. Ների բաղադրության մեջ, ինչպիս որիքակ, դիֆենիլամին-քլորարսինի, դիֆենիլցիանարսինի, ֆենիլմիզոֆուգենի, քլորալիկրինի, կալտածին թթվի, կապտածնի քլորուկի և բրոմուկի և այլն։

Կալցիի ցիանամիջից կարելի յե ստանալ նոր պայմուցիկ նյութեր՝ նիտրոմիզակ (նիտրոմօչեվինա) և նիտրոգուանիդին, վերջինիս պատրաստելը կալցիի ցիանամիջից առանձնապիս ձեռնոտու յե։ Արտադրությունը չափազանց պարզ է։ Ցիանամիջի լուծվածքի գործքացման ժամանակ բյուրեղանում ե գուանիդինի ցիանուկը վորընեցտությամբ կարելի յե վերածել նիտրոգուանիդի՝ ներգործելով, նախ ծծմբային, և հետո յել ազոտային թթուներով։ Ցիանամիջի արտադրության հետ զուգընթաց կարելի ե ստանալ ցիանիդներ, վորոնք պատերազմի ժամանակ հարկավոր կը լինեն թունավոր զագեր պատրաստելու համար, իսկ խաղաղ ժամանակում ել կարող յեն ծառայել վոսկի գտելու, գալվանոսկաստեկայի և այլ նման նպատակների։ Կալցիի ցիանամիջի նախընթաց արդյունաբերությունը կալցիի կարերիցի պատրաստելու ե, վորից ստացվում ե ացետիլեն գազը, վորը բալվական մեծ չափով վործ ե ածվում խաղաղ կյանքում։

Պատերազմի ժամանակ բացի ոպտիկական նշանատվության (սիգնալիկացիա) համար ունեցած իր

մեծ դերից, ացետիլենը լայն չափով կկիրառվի նաև լուսիզիտ արագագրելու համար (յեթե վերջինս կարդարացնե իր վրա դրած հույսերը)։

Պատերազմի դեպքում հարակցած (ֆիքսավանանի) ազոտի պահանջը մի քանի անգամ ավելի կը լինի, քան այդ կարող են տալ այժմյան գործարանները։ Սրանից ե բղխում այն տեսնդային հետաքրքրությունը, վոր ցույց են տալիս զանազան յերկրներ այդ հարցի վերաբերմամբ։ Առանձնապես հետաքրքիր ե այդ գործի դրությունը ֆրանսիայում։ Ֆրանսիան խաղաղ ժամանակ տարեկան 110,000 տոն ազոտի պահանջ ունի։ Պատերազմի դեպքում այդ պահանջը կարող ե կրկնապատկվել, նույն իսկ յեռապատկվել։ Այն ինչ, ֆրանսիայում մինչև այժմ շատ քիչ գործարաններ կան, վոր մթնոլորդային ազոտից ազոտային բաղադրություններ են պատրաստում։ Յեթե փակվի Զիլիի բորակի մուտքը գեպի ֆրանսիա, ֆրանսիան անյելանելի վիճակի մեջ կը նկնի, յեթե չկարողանա ստիպել գերմանական գործարաններին իրեն համար աշխատելու։

Ֆրանսիական կառավարության լիազոր Շարլ Լեբուկի նախագծի համաձայն ֆրանսիայի ազոտային նյութերի արտադրության ծրագիրը պետք ե կազմված լինի այսպես։

19.000 տոն ազոտ կոկսի հնոցներից, ինչպիս մինչև պատերազմը։

15.000 » » կոկսի նոր հնոցներից և գազի գործարաններից։

28.000 » » կալցիի ցիանամիջի գործարաններից։

2.000 » » վոլտյան աղեղի ողնությամբ հարակցած։

36.000 » » Գաբերի մեթոդով:  
30.000 » » Փրանսիական կողմի և իտալական  
կազալեի յեղանակներով:

Ընդամենը 300.000 տոն ազուր: Արտադրական  
ծրագրի մի փոքր բարձրացումը, խաղաղ ժամանակի  
պահանջի նկատմամբ (26 000 տոն), պետք է հաշվել  
պատերազմի գեղքում ռազմական պահանջը լրացնե-  
լու համար: Ներկայումս այս ծրագրի հազիվ թե 20% ը  
ի կատար ածվի: Իրար հետ մրցում են յերկու յեղա-  
նակներ, Գաբերինը և կողմինը, վորոնցից ամեն մեկն  
ել ունի թե իր առավելությունները և թե թերու-  
թյունները:

Գաբերի պրոցեսի կողմնակից և կուլմանի ար-  
դյունաբերական զորեղ խմբակը, վորի մեջ մտնում յեն  
ֆրանսիական խոշոր քիմիական ձեռնարկությունների  
մեծագույն մասը, վորոնց թվում նաև «Compagnie  
Nationale de Matieres Colorantes»-ը, կողմի յեղա-  
նակի կողմնակից և պաշտպան են՝ «Societe de Saint  
Gobin»-ը և «l' Air liquide»-ը: Յերկու խմբերի մրցու-  
մը խանգարում է գործին:

Ազուրային նյութերի արդյունաբերությունը մե-  
կըն և այն սակավաթիվ քիմիական արդյունաբերու-  
թյուններից, վորը խաղաղ կյանքի ընթացքում կարող և  
զարգանալ այնպիսի ծավալով վոր լիովին կարող կը-  
լինի բավարարել պատերազմական գործողությանց  
պահանջներին: Այդ առանձնապես ճիշտ և գյուղատն-  
տեսական յերկրների համար, վորոնք մեծ քանակու-  
թամբ ազուրային պարարտացնող նյութեր գործածելով  
զգալի չափով կարող են բարձրացնել իրենց հողերի  
բերրիությունը:

Բացի նիտրոցելյուզովից ու նիտրոզլիցերինից,  
վորոնք հանդիսանում են ամեն տեսակի բալիստական

վառողներ ու ուժանակներ (դինամիտ) պատրաստելու  
հիմնական նյութեր, մեծ քանակությամբ գործեն ածվել  
և գործ են ածվելու փշրող ոռումբների լիցքի համար  
պիկրինյան թթուն և տրինիտրուլուոլը (արտիլ):  
Պիկրինյան թթուն առաջ խաղաղ ժամանակ գործ ե  
ածվել վորպես ներկի ներկայումս նա ներկերի արդյու-  
նաբերության մեջ ծառայում ե պիկրամինյան թթու-  
ներ պատրաստելու, վոր հարկավոր յեն մի քանի ա-  
զոններկերի արտադրության համար: Ի հարկե, այդ  
չափով արտադրությունը նույնիսկ չնչին մասով ել չի  
կարող բավարարել պատերազմական կարիքներին,  
ուստի ամեն մի յերկիր հաշվի պետք է առնի այդ  
անհրաժեշտությունը և ամենակարճ միջոցում իր յեր-  
կըրում հաստատե այդ նյութերի մի քանի անգամ ա-  
վելի մեծ արտադրություն: Հետևապես, ծառանում ե  
իր վողջ մեծությամբ հարկավոր հում նյութերի հար-  
ցը: Պիկրինյան թթուն կարելի է պատրաստել զա-  
նազան յեղանակներով: Սովորական յեղանակը կայա-  
նում է ֆենոլի նիտրելու մեջ, ֆենոլի, վոր կազմում  
և քարածուխի կուպրի դիստիլացիոնի միջին ֆրակ-  
ցիան: Ֆենոլ կարելի է պատրաստել նաև թեթև յու-  
ղերից ստացված բենզոլից կամ կոսի հնոցներից ստաց-  
վող գազերից: Բենզոլն ու ֆենոլը մեծ քանակությամբ  
գործ են ածվում ներկերի արդյունաբերության մեջ:  
Վերջապես ֆենոլ կարելի է ստանալ բենզոլեց սին-  
թեզի միջոցով: Սրանից յեղակացնում յենք, վոր զին-  
վորական տեսակետից անհրաժեշտ և լայն չափով ա-  
պահովացնել բենզոլի ու ֆենոլի կամ գոնե առաջինի  
արտադրությունը: Իսկ զրա համար անհրաժեշտ և  
գաղարեցնել քարածուխի անինայրեն ամբողջովին  
այրելը և հիմնել ածուխը կոկսացնելու գործարաններ,  
ոգտագործելու համար դիստիլացիոնից ստացված մը-

թերքները։ Սա ավելի ևս կարեոր է, քանի վոր այդպիսով կստացվեն ներկերի արդյունաբերության անհրաժեշտ նյութեր։ Ֆրանսիան պատերազմի ընթացքում արտադրել է 250.000 տոն պիկրինյան թթու։

Ածուխի կոկսացման ժամանակ ստացված գազային մթերքների ամրողական կերպով ոգտագործելը թելազրում է նաև արինիտրոտոլուոլի արտադրության համար կարեոր տոլուոլ ստանալու անհրաժեշտությունը։ Վերջինս շնորհիվ պայթման ուժի մեջ անվտանգ լինելուն, մեծ դեր է խաղացել և դեռ պետք է խաղա, նա գործ է ածվում գլխավորապիս հրետանու ոռմբեր լցնելու համար, և կարող կըլիներ համարյա բոլորվին դուրս մղել պիկրինյան թթվի գործածությունը, յեթե տոլուոլի արտագործությունը սահմանափակ չլիներ։ Կա և այդ ժամանակը, յիրք կըդանվի ըենդովի մետիլերու արդյունաբերական ձեր։

Ներկայումս զանազան կատարելագործություններ են մտցրած, վոր պարզեցնում և եժանացնում յեն տրոտիլի արտադրությունը։ Օսսոո-նիտրոտոլուոլը, պառանետրոտոլուոլը և դինիտրոտոլուոլը, վորոնցից ուժեղ սիտրումով ստացվում ե արինիտրոտոլուոլը, հանգիստ նույն ներկերի արդյունաբերության մեջ կիսամշակ նյութեր։

Ֆրանսիան պատերազմի ընթացքում արտադրում եր որական մոտ 40 տոն արոտիլ։ Գերմանիան՝ 100 տոնսից ավելի։

Բացի հիշյալ յերկու փշրող պայթուցիկ նյութերից գործ յեն ածվել և լայն չափով յերկի կըտարածվեն ելի ուրիշ պայթուցիկ նյութեր։ Պետք է հուսալ, վոր մեծ քանակությամբ կըտրդյունաբերվեն նիտրոնաֆտալինը, դինիտրոնաֆտալինը, դինիտրոբենզոլը հելպանիտրիֆենիլառուֆիդը արինիտրուանիզոլը և հեկ զանիտրոգիֆենիլամինը։

Պետք ե նույնպես հուսավ վոր խոշոր արդյունաբերություն կստանա դիֆենիլամինը (հետևապես և անլիինը), վորից, առաջինը մեծ քանակությամբ հեկ-զանիտրոգիֆենիլամին կըպատրաստվի, վորը շատ զորեղ պայթուցիկ նյութ է իսկ յերկրորդը՝ դիֆենիլամինը քլորարսին թ։ Ն-ը վորը մեծ ապագա ունի։ Դիֆենիլամինը, բացի դրանցից գործ և ածվում վորպես անծուխ վառողի կայունացնող (ստարիլիզատոր)։ Ներկի գործարանները չպիտի կարողանան բավարարել հարկավոր զեպքում դիֆենիլամինի պահանջը, վորովճետել իրենց գործնեության ընթացքում շատ քիչ չափով են ոգտվում այդ նյութից։

Քլորատների և վերաքլորատների վրա հիմնված պայթուցիկ նյութերը հազիկ թե լայն գործածություն ունենան շնորհիվ իրանց վտանգավորության։

### Թ. Ն. ԱՐՏԱՂՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ ՀՅԻՄ ՆՅՈՒԹԵՐԻ ՄՏԱՆԱԼԸ

Թ. Ն.-ի ներկա արտադրության մեջ, բացի վերեւում հիշված արօմատիկ ածխաջրուկներից ու թթուներից, սկզբնական հում նյութեր են համարվում, քլորը, բրոմը, զառիկը և ծծումբը։

Քլորի խնդիրը առանձնապես կարեոր է։ Քլորը մտնում է բոլոր կարեսոր թ։ Ն.-ի մեջ՝ ֆուգենի, սուպերպալիտի, քլորպիկենի, իսորիտի, լյուիզիտի և արմինների։

Այս ինչ քլորի պահանջը խաղաղ ժամանակ շատ թույլ է պատերազմի ժամանակի պահանջից։ Պատերազմից հետո մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ կրիտիկական դրության մեջ ընկնելով սահիպված յեղան փակվելու։

Մի քանի յերկրներում, կառավարությունները

յերկրի պաշտպանությունը աչքի առաջ ունենալով, աշխատում են պահպանել քլորի արտադրությունը: Այդ նպատակի համար ել արդյունաբերական ընկերություններին բաց են թողնում վարկեր, տալիս են նըպաստներ, բարձրացնում ներմուծած սողայի տարիքը և այլն:

Մյուս կողմից ել յեռանդուն կերպով աշխատում են քլորի նոր գործադրություններ գտնելու: Պատերազմի սկզբին ելեկտրոլիտիկ սողայի գործարանների քլորի մեծ մասը գնում եր քլորային կիր պատրաստելու համար, վորը բավականին լայն չափերով գործադրվում եր ինդուստրիայի մեջ: Բայց շուտով շուկան հագեցավ և քլորային կրի գներն այնքան ցածրացան, վոր լայն չափով շարունակել արտադրելը անհնարին դարձավ. քլորի մի վորոշ քանակություն կլանում եցին սինտեթիկ քլորջեածնական թթվի, հիպոքլորային աղկալինների, մի քանի մետաղային քլորուկների և մի քանի որգանական բաղադրությունների համար, վորոնք գործ են ածվում ներկերի ու դեղերի արդյունաբերության մեջ վորպես լուծողներ (ածխածնի 4 քլորուկ, բենզիլ քլորիդ, քլոր բենզոլ, տրիքլորեթիլեն) և բենզիլիդենքլորիդի արդյունաբերությունները:

Մի ժամանակ հույս եցին տածում ածխածնի 4 քլորուկի լայն չափով կիրառման վրա, վորի մեջ քլորի պարունակությունը ըստ քաշի կազմում եր 92 տոկոս, (Խտալիա, Ամերիկա):

Եեկ սակայն այդ բոլորը միասին անկարող են գործադրել քլորի ամրող քանակությունը: Ելեկտրոլիտիկ սողայի մեծ արտադրություն ունեցող յերկրի համար քլորի ավելացուկի խնդիրը մինչև որս դեռ մնում է չլուծված:

Ներկայում փորձեր են արվում քլորը ոգտագոր-

ծելու ցելյուլոզի արտադրության մեջ: Կան նույյնիսկ այդ յեղանակով ցելյուլոզ պատրաստող գործարաններ. ստացվում ե լավ վորակի մթերք, բայց նրա արժեքը մինչև հիմա ել բարձր ե, չնորհիվ այն հանդամանքի, վոր այդ ձևով պատրաստելը մեծ քանակությամբ քլոր ե ծախսում: Այդ պատճառով ել քլորով պատրաստած ցելյուլոզը չի կարող դիմանալ բիսուլֆիտով պատրաստածի մրցմանը:

Բայց և այնպիս վորձերը շարունակվում են և հույս կա, վոր վորոշ կատարելագործություններից հետո քլորով պատրաստած ցելյուլոզի արդյունաբերությունը կտա վոչ միայն լավ, այլ և եժան մթերք. այս գեպքում կարելի կլինի քլորի ավելցուկի խնդիրը լուծված համարել, վորովհետև ցելյուլոզի պահանջը չափաղանց մեծ ե:

Ուրիշ փորձեր ել են տեղի ունենում քլորի գործածությունը ընդարձակելու համար: Բայց և այնպիս խնդիրը գեռ լուծված չե և պետք ե ի նկատի ունենալ այն, վոր զորահավաքի գեպքում, չափաղանց արագ կերպով պետք ե յեռապատկել կամ քառապատկել քլորի արտադրությունը: Ուրեմն հարկավոր են նախատեսնված սարքեր:

Դժվար ե նախատեսնել թե ինչպիսի նշանակություն ե ունենալու բրոմը աղացագա պատերազմում: Բրոմը մը մտնում ե արցունքաբեր գազերի բաղադրության մեծ մասի մեջ, վորոնք լայն չափերով գործադրվում են մի քանի տակտիկական նպատակների հասնելու համար: Յեթե իրոք ճշմարիտ լինի, վոր բետա բետապրեմիքրոմիկեան սուլֆիդը ունի ուղղական ավելի արժեքեալ քաղոր հատկություններ, քան թե քլորային արտադրությունը, ուրեմն կարելի կը լինի սպասել, վոր պատերազմի ժամանակ բրոմի սպառումը չափաղանց կմե-

ծանա: Այս դեպքում, շատ յերկրներ բոլորովին անպատճառ կը լինեն, վորովհետև բրոմ պարունակող հանքերը գտնվում են միայն շատ սակավ վայրերում, իսկ ծովային ջրասեղների մոխրից կամ աղի լճերի ջըրերից բրոմ ստանալը պահանջում է բարդ և թանգ նստող սարգ ու կարգ: Որինակ, ֆրանսիան, վորը չունի իր սեփական բրոմի արտադրությունը, պատերազմի ժամանակ ստիպված յեղավ այդ արտադրությունը կազմակերպել ծունիսում, Յարսիսի մոտ գտնվող ըստորյերկրյա լճերի ջրերից: Գործնեության ամբողջ ընթացքում այստեղ մոտ 850 տոն բրոմ է արտադրվել:

Մինչև 1917 թիվը զառիկը չեր մտնում թ. Ն-ի բաղադրության մեջ:

Պատերազմի յերկրորդ կիսին արդեն սկսեցին գործածել սկզբում ալիքատիկ և հետո ել արօմատիկ արսիններ: Վերջինները պինդ նյութ լինելով միայն սաստիկ ներգործող փշրող պայթուցիկ նյութերի ոգնությամբ առաջացնում են փոշե մառախուղ և ունեն հակազազերի փիլտրից ներս թափանցելու մեծ ուժ, քան ալիքատիկ արսինները: Այդ արսինները պատրաստելու համար հարկավոր են արօմատիկ ածխաջրուկներ և զառիկի անջրում: Առաջինի մասին խոսել ենք, իսկ ինչ վերաբերում է յերկրորդին, հապա այդ ստացվում ե անմիջապես զառիկի հանքը ողի մեջ բովելու միջոցով: Հետեւապես ամբողջ ինդիրը կայանում է նըանում, թե յերկիրը ինչքան հարուստ է զառիկի հանքերով: Գերմանիան, վոր պատերազմի ամբողջ ընթացքում, արտադրեց 4 տոնից ավելի զանազան արսիններ, ստիպված եր սահմանափակել այդ արտադրությունը հենց հում նյութի պակասության պատճառով: Յեթե թ. Ն-ի մասսայական արտադրության մեջ մըտնի նաև լյուիզիտը ( $\text{CH}_3\text{AsCl}_2$ ), զառիկի պա-

հանջը ավելի կը մեծանա: Հետեւապես հարկավոր ե այժմյանից իսկ միջոցներ ձեռք առնել զառիկի հանքերը մշակելու և նոր հանքեր գտնելու համար: Անդրաժեշտ ե նաև շահագործել զառիկ պարունակող զանազան նյութերն ու տականքները: Այսպես որինակ, լավ կը լինի հետազոտության նյութ զարձնել պիրտներից եժան գնով զարիկ ստանալու ձևերը, քանի վոր պիրիտներից շատերը մինչև 1 տոկոս զարիկ են պարունակում: Այսպիսով, իմիջի այլոց, կը լավանար ծծմբային թթվի վորակը:

Զարիկային բազագրությունների արդյունաբերությունը կարող է ծագել և խաղաղ ժամանակ, քանի վոր զարիկի պահանջը մեծ է և գնալով ել շարունակ մեծանում է:

Մի քանի յերկրների համար չափազանց լուրջ կերպարանք և ստանում ծծմբի ինդիրը: Ծծումը հանդիսանում է ուազմական ամենակարենոր զազի՝ իարիիսի բազալրիչ մասը, իսկ իպրիտը մինչև այժմ իր ռազմական հատկությամբ շատ ե գերազանցել մյուս թ. Ն-ից: Արդի բոլոր զինվորական պետությունները ձգտում են պատերազմի զեպքում իրանց ապահովացնել իպրիտի մասսայական արտադրությամբ: Այն ինչ բոլոր պետություններն ել այնպիսի յերջանիկ գրության մեջ չեն գտնվում, ինչպիսին են հտալիան ու Ամերիկայի Միաց. Նահանգները: Ծծումը չունենալու եր այն գլխավոր տատառու, վոր Գերմանիան սահմանափակեց իպրիտի արտադրությունը: Շատերն ել կարծում են, թե գերմանացիք չկարողացան մեծ քանակությամբ իպրիտ պատրաստել իրանց մեթոդի բարդության պատճառով: Պատճառը միայն այդ չե, վորվիետ այն, ինչ վոր բարձր եր Անտանտի թույլ քիմիական արդյունաբերության ուժերից, փայլուն կերպով լուծում

եր և ի կատար ածում գերմանական հսկա ու ճշգրիտ քիմիական արդյունաբերության ապագարատը: Խոշոր դեր կատարեց հենց այդ ծծումըի պակասությունը, վորը հարկավոր եր վոչ միայն իպրիտի, այլև ծծմբային թթվի արտադրության համար:

Անպատրաստից, թույլ զարգացած քիմիական արդյունաբերությամբ իպրիտ արտադրելու անհրաժեշտության գեպքում, բնական և վոր միակ յելքը հանդիսանում ե ետիլենից և ծծմբի քլորուկից ստանալու Գուտրի ավելի քան պարզ յեղանակի գործադրությունը: Իսկ խոշոր քիմիական-արդյունաբերություն ունենալու և համապատասխան նախապատրաստություն կատարած լինելու գեպքում ամենից ճիշտը կը լինի գործադրել այդ մեթոդների միացումը: Այս իպրիտը, վորը պետք ե անմիջապես գործադրվի կարելի յե պատրաստել Գուտրի մեթոդով (թեև այս գեպքում ել գեռ մնում ե հոտի հարցը), իսկ այն իպրիտը, վորը պետք ե գեռ պահպի միառ ժամանակ, ավելի նըպատակահարմար կըլինի՝ պատրաստել գերմանական Մեյյերի յեղանակով:

Սակայն թե այս և թե մյուս յեղանակները կիրառելու համար ել հարկավոր և ծծումը նշանակում ե, վոր պետք ե նախորոք հոգալ անհրաժեշտ քանակով ծծումըի պաշար ունինալու համար և հետո ել աշխատանքներ տանել ծծումը պարունակող զանազան հանքերից ծծումը ստանալու միջոցները կատարելագործելու վրա: Հետագա պատերազմում հաղիկ թի լայն գործածություն գտնեն ցիան պարունակող նյութերը: Անցիալ պատերազմի փորձերը դրական հետևանքներ չտվին: Համեմայն գեպս, յեթե կալցիտ ցիանամիդի արտադրությունը լավ հիմքերի վրա և զրված, կարելի կըլինի լրել կերպով ապահովել իրեն այդ նյութե-

ըի պահանջի հանդեպ: Այս բոլորից յերեսում ե, վոր խաղաղ ժամանակի քիմիական արդյունաբերությունը (նրա մեջ նաև ներկերի արդյունաբերությունը) գեռ շատ հեռու ե պայմանական պահանջներին բավարարելուց: 400—500 կիլոմետր մը-թերքներից, վորոնք գործ են ածվում ներկերի արդյունաբերության մեջ, միայն հետեւյալներն են վորոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող յեն գործադրվել զինվորական նպատակների համար՝ ուստոնիտրուուլուուլ պարանիտրուուլուուլ զինիտրուուլուուլներ, անիլին, ֆենոլ, կենզուլ քենզիլի քլորուկ, նիտրո և դի-նիտրոնաֆտալին, որտեղ և պարանիտրովլորբենզուներ, պիկրինային թթու, զինիտրովլորբենզու և դի-նիտրոֆենոլ, քլորբենզուլ, զինիտրոբենզուլ, նիտրոբենզուլ, սուլֆանիլային թթու:

1922 թվի ֆրանսիական ներկերի տարեկան ամբողջ արտադրությունը հասնում եր հազիվ 8000 տոնի, այն ինչ պատերազմի ժամանակ նա արտադրել ե մոտ 25.000 տոն թ. Ն.: Նշանակում ե արդեն անցյալ պատերազմում յերբ դեռ թ. Ն.-ի պահանջը սահմանափակված եր. թ. Ն.-ի արտադրությունը շատ ավելի գերազանց ե յեղել քան ներկերի արտադրությունը: Ուղանց ել բնչ կարելի ե սպասել այժմ:

Գերմանիայի որինակն այնքան ել համոզեցուցիչ չի, վորովհետեւ ամբողջ աշխարհին ներկեր նա յեր մատակարարում և տարեկան արտահանում եր մոտ 125.000 տոն: Բայց ինչպես տեսանք, նույնիսկ Գերմանիան ել իր հակայական ներկերի արդյունաբերությամբ չկարողացավ իրեն ապահովել մի շարք թ. Ն.-ով:

Անտանտան պատերազմի ժամանակ ստիպված յեղագ շտապ կերպով թ. Ն.-ը մեծ արտադրություն կազմակերպել: Շնորհիվ Ամերիկյան Միաց. Նահանգ-

Ների ոգնության և բոլոր անհրաժեշտ հում նյութեր ունենալուն, դաշնակիցներին հաջողվեց ի կատար ածել այդ գործը, բայց շտապ կերպով զրված արտադրությունը, բոլորովին չեր համապատասխանում խաղաղ կյանքի պահանջներին և այդ պատճառով պատերազմից հետո հարկ յեղավ մասամբ լիկվիդացիայի և մասամբ ել փոփոխության յենթարկելու:

Անցյալ պատերազմից փորձկելով և հաշվի առնելով թ. Ն.-երի մասսայական արտադրության անհրաժեշտությունը, նոր պատերազմի գինուրական պետությունները պետք ե յերկրի գինուրական նախապատրաստության ծրագրի մեջ մտցնեն քիմիական արդյունաբերության արմատական կազմակերպությունը: Զինա-քիմիական արտադրականության ծրագրը պետք ե ի կատար ածվի շտապ կարգով և խիստ կերպով հաշվի առնելով յերկրի հում նյութերի հնարավորությունները:

Ամենից առաջ պետք ե ապահովել թ. Ն.-ի գինուրական մինիմումի պահանջը: Պատերազմի առաջին շրջանի համար պետք ե նախորոք պատրաստած լինի թ. Ն.-ի անհրաժեշտ պաշարը: Գոյություն ունեցող քիմիական գործարանները պետք ե ունենան լրացուցիչ կահավորություն և վարժ աշխատավորների կազմ: Ապա հարկավոր ե ոժանդակել ու զարգացնել խաղաղ ժամանակի քիմիական այդյունաբերության այն ճյուղը, վորոնք կարենը են թ. և պայմուցիկ նյութեր ուղարկած էլեկտրական ամպակտում պետք ե հարմարեցրած լինի այնպես, վոր ուսումնակազմի գեպքում կարելի լինի իսկույն և յեթ անցնել թ. Ն.-ի արագ արտադրությանը: Պատերազմի գեպքում թ. Ն. արտադրել կարողացող քիմիական գործարաններ կառուցանելիս, պետք ե ինկա-

տի ունենալ նաև յերկրի ստրատեգիկ դիրքը:

Հարկավոր ե գործադրել այն միենույն սկզբունքը, վորը մինչև այժմ գործադրվել ե բոլոր զինվորական գործարանների նկատմամբ: Ինչքան վոր թույլ կտան արտադրության պայմանները, գրանք հեռու պեաք և ընկած լինեն սահմաններից: Անհրաժեշտ ե գործարանները ապահովացնել նույնպես հակառակյան պաշտպանության միջոցներով:

### ՅԵՐԿՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև այժմ մենք խոսեցինք յերկրի քիմիական նախապատրաստության միայն մի մասի՝ արտադրության մասին, վորը հսարավորություն և տալիս քիմիական հարձակում կատարելու: Դրա յերկրորդ և վոչ պակաս կարենը մասն ե՝ քիմիական ինքնապաշտպանությունը: Արդի պատերազմի առանձնահատկությունները զգալի կերպով բարդացնում և դժվարացնում են պաշտպանության գործը: Յեթե առաջ խնդիրը կայանում եր, սահմանները ամրացնելու և ֆորտիֆիկացիոն սիստեմը կազմակերպելու մեջ, այժմ այդ հարցը չափազանց ընդարձակվում է: Ցամաքային պատնեշները անբավարար են դառնում, զրանք անզոր յեն ուղանակերի հանդեպ: Ծովափնյա ամրությունները գործնական են միայն նավատորմիղի գեմ, իսկ հիդրոպլանների գեմ՝ անբավարար: Կարիք ե լինում պաշտպանել ամբողջ յերկիրը ցամաքից, ծովից ու ոդից գործող թշնամու գեմ: Ամենից դժվարը, ինարկե, ոդային թշնամուց պաշտպանվելն է: Անցյալ պատերազմի վորը և պատերազմից հետո զանազան յեկրներում տեղի ունեցած զորախաղերը ցույց են տալիս, վոր թշնամու ոդային հարձակման գեմ միակ հուսալի

պաշտպանությունը սեփհական խորտակիչ—ողանավերով հականարձակումն եւ Ապագա պատերազմում հաղթող հանդիսանալու յե նա, ով վոր կտիրապետի ողին: Այս իմաստով ավիացիայի ռազմական նշանակությունը անսահման կերպով մեծ եւ հենց սրանով եւ բացատրվում բոլոր յերկրներում անդուն կերպով իրանց ողանավատորմիջը մեծացնելու և կատարելազործելու համար շարունակվող աշխատանքները:

Հեռագնաց ոռւմբատար գազափոշիացնող սավառնակների, նույնպես և հակայական և տասնյակ տոն թ. Ն.-ը տանող ողանավերի գործադրությունը անհրաժեշտ եւ դարձնում մանրազնին կերպով նախապատրաստելու յերկրի, նրա ամբողջ բնակչության, բոլոր քիչ թե շատ կարևոր կենսական վայրերի պաշտպանության գործը:

Քիմիական ինքնապաշտպանության խնդիրը բաժանվում եւ յերկու մասի՝ ա) կենդանի անհատների և բ) կենդանի կոլլեկտիվների պաշտպանության,

Ռազմագաղերում թ. Ն.-ի յերևան գալու ժամանակ հարցի ծանրության կենարոնը ընկնում եր առաջին մասի վրա, վորովհետև գազերը գլխավորապես գործ ելին ածվում ռազմաճակատներում և պետք եր մտածել զինվորների անհատական պաշտպանության մասին, պահելով նրանց համար հնարավորության չափ ունակություն կովկիլու և պաշտպանվելու: Գազապատանների հարցը չեր կարող առաջնակարգ դեր խաղալ, վորովհետև անհնարին յերկարժամանակ փակված պահել գործող զինվորական մասերին:

Ներկայումս կարիք եւ զգացվում մտածելու յերկրի ամբողջ բնակչության, դեկավար կենտրոնների և գործարանների անընդհատ աշխատության, յերկաթու-

դիների և այլ տեղերի պաշտպանության մասին: Այս բոլոր խնդիրները չեն կարող տեղափորվել անհատական պաշտպանության շրջանակում: Ուստի կարելի յե ասել, վոր ապագա պատերազմում կոլեկտիվ ինքնապաշտպանությունն եւ առաջնակարգ դեր խաղալու: Այդ դեռ չի նշանակում, ի հարկե, վոր անհատական պաշտպանության խնդիրը կորցնում եւ իր նշանակությունը: Մի քանի անգամ կավելանա միայն նրանց և այն ամենի թիվը, ում և ինչին վոր պետք եւ պաշտպանել:

Մասսայական պաշտպանությունը համապատասխանելու և ողաշիմիական զենքի մասսայական գործադրությանը:

Անհատական պաշտպանությունը իր ամբողջ կարևորությամբ կմնա գործող բանակում և այն ամենքի համար, ովքեր գտնվելով թիկունքին մերձ կամ հեռու, պետք եւ պահպանեն իրանց ռազմական կամ աշխատելու կարողությունը:

Պատերազմի այդ բոլոր գործոն մասնակցողները պետք եւ առաջին հերթին ստանան պաշտպանության ամենալավ միջոցները, այսինքն աչքերն ու շնչառության գործարանները՝ պաշտպանող հակագազեր և կաշին պաշտպանող զգեստներ իրանց պարագաներով:

Պատերազմի ընթացքում հակագազերը անընդհատ շարունակ կատարելազործվել են, ինչպես շարունակում են կատարելազործվել նաև պատերազմից հետո: Ներկայումս զանազան յերկրներում մշակված են նմանորինակ ձեռք, վորոնք այս կամ այն չափով մոտենում են իդեալականին: Այս հակագազերը, (յեթե չհաշվենք Դրեգերի տիպի հատուկ թթվածնային գործիքները և այլն) կազմված յեն՝ յերեսի մասից կամ դիմակից, վորն անմիջապես ամրացրած եղիմակի բե-

բանի ողակին կամ նրա հետ միացրված և վոլորուն ռետինի խողովակով։ Վերջին սխտեմն ավելի շատ և տարածված, վորովհետև նա ավելի մեծ առավելություններ ունի քան առաջինները։

Հակագագերը կատարելագործելու ժամանակ, դիմակի համար ձգում են՝ ա) նվազացնել ֆնասակար տարածությունը. (դիմակի «ֆնասակար տարածություն» կոչում և դեմքի ու դիմակի մեջ ազատ մնացած բաց տարածությունը, այդ տարածությունը պահում և արտաշնչած ածխաթթու գազի մի մասը), բ) մեծացնելու տեսողության սահմանը, գ) դիմակը յերեսին լավ կերպով կըպչելուն, դ) թեթևացնելու նրա քաշը, յերական թ. Ն.-երի համար անթափանց դարձնելու, զ) ներշնչան և արտաշնչաման փականները կանոնավոր և ապահով գործելու, ե) արագ կերպով դեմքին հագցնել (կապերի պարզության)։

Ներկա դիմակների մեջ ֆնասակար տարածությունը հասցրած և մինիմումի (մինչև 250 լս. սանտիմետր), դիմակի վերևի, այսինքն տեսողության մասը բաժանված և ներքերի շնչառության մասից, վերացված յեն շրթնահուպողակը և քթի սեղմիչը, վորոնք չափազանց դժվարացնում եյին հակագագ կրել։

Ակնոցների տրամագծի մեծացնելը ու դրանց դիմակի վրա տեղափորելը տեսողության լայնության սահմանը հասցնում և մաքսիմումի՝ մինչև 120 աստիճանի (ազատ տեսողության 190 աստիճանի փոխարեն), իսկ բարձրության սահմանը՝ մինչև 40 աստիճանի (ազատ տեսողության 65 աստիճանի փոխարեն); Ակնոցների թափանցիկությունը պահելու համար գործ են ածում հատուկ չքրտնող նյութեր, ցելուլուտիվի հիգրոսկոպիկ տեսակները, ժելատին, այս նյութերը հեշ-

առւթյամբ քերծվում ու խազմղվում են կամ ուռչում, ուստի և յերկար չեն դիմանում։ Այդ ի նկատի առնելով ներկայումս մի քանի դիմակների համար գործ յեն ածում ապակյա ակնոցներ։ Կոտրվելու ժամանակ գաղի ներս մտնելու վտանգը կանխելու նպատակով այդ ակնոցները շինում յեն յերկտակ ապակուց, արանքը դնում ցելուլիդ (ամերիկական տրիպլեքս)։ Ապակին քրտնելուց պահելու համար ոծում յեն փոքր չափով հատուկ ոծանելիքով։ Այդ ոծանելիքի բաղադրությունը զանազան բանակներում տարբեր յեն լինում։ Այս հարցի վրա ամենից շատ աշխատանք է տարբել ամերիկական զինվորա-քիմիական լաբորատորիաներում։ Յենթարկվել են փորձերի զանազան խառնուրդների մեջ քանակություն, ամենալավ արդյունքը տվել են հետևյալ խառնուրդները՝

Սուլֆոնած գոնգուղի (բապսի յուղ)

|                                        |          |
|----------------------------------------|----------|
| 65 տոկոս սուլֆոնած գոնգուղի նատրոնի աղ |          |
| (35 տոկոսը ջուր)                       | 100 մաս. |
| Կառւստիկ նատրոն (նատրոնի ջրատ)         | 20 մաս.  |
| Սիրոպանման լուծվող ապակի               | 5 մաս.   |
| Գլիցերին                               | 3 մաս.   |
| «Ծովային յուղ»                         | 3 մաս.   |

Սուլֆոնած բամբակի յուղ

|                                             |          |
|---------------------------------------------|----------|
| 62 տոկոս սուլֆոնած բամբակի յուղի կալիոնի աղ |          |
| (38 տոկոսը ջուր)                            | 100 մաս. |
| Նատրոնի ջրատ (կառւստիկ նատրոն)              | 15 »     |
| Սիրոպանման լուծվող ապակի                    | 3 »      |
| Գլիցերին                                    | 3 »      |
| «Ծովային յուղ»                              | 3 »      |

Հիշյալ խառնուրդները չորացնում յեն և տալիս յեն նբանց ձողիկների ձև։

Դիմակը պետք ե հուալ կերպով կպչի դեմքին և բոլորովին չեզոքացնի ծածկված մասը, նա պետք ե պատրաստված լինի զազի համար անթափանձ գործվածքից: Այժմյան դիմակները շինում են ռեզինացրած շորից (լաթից), ըստ վորում յերեսի մասը կաղապարով կերտում են: Պատրաստելու ժամանակ աշխատում յին խույս տալ շատ կարեր ունենալուց, վորոնց վրա գընում են յերիզներ ու ծածկում ռեզինի սոսինձով: Դիմակի շորի հարցը մեծ նշանակություն ունի, մանավանդ մայոր Pierse-ի փորձերից հետո, վորը ցույց տվեց, վոր բոլոր այդ կտորները, դրանց հետ նաև 1919—1920 թ. ամերիկական դիմակի կտորը իրանց միջով անց են կացնում ող: Ֆազերը (փորձել են՝ քլորպիկրինը, ֆուսկենը և իսոլիտը) դաշտային կենտրոնացումի քանակով դիմակի մեջ չեն թափանձում, վորովհետև լուծվում են ռեզինի մեջ: Սակայն ռեզինի լուծող հատկությունն ել ունի իր սահմանը և բացի դրանից մեզ հայտնի չե, արդյոք սեղինը կարող կըլինի դիմանալ նոր գազերին: Մայոր Pierse-ի հարուցած հարցը չափազանց կարեոր ե և պետք ե հուսալ վոր նրա կատարած փորձերի հետևանքով դիմակի գործվածքները կըկատարելազործվեն:

Հիմրկվան դիմակների դեմքին ամրացնելու միջոցները համարյա թե հասցրած են կատարելիության: Կապերը 2-3 ելաստիկ շերտ են: Դրանք զանազան կերպով յին ամրացրած դիմակներին: Դիմակները շինում են 4-6 տեսակի մեծությամբ:

Հակագաղի եական մասը կազմում են շնչառությունը ապահովող փականները: առանձնապես կարեոր ե արտաշնչան փականը, վորը հեռացնում է արտաշնչած ողը և ածխաթթու գաղը և այդպիսով պահպանում կլանող տուփին փշանալուց: Այդ փականները

սովորաբար պատրաստում են ռեզինի թերթերից, ռեզինի պարկերից և այլն: Արտաշնչան փականը փչանալու դեպքում ունենում ե նախաղգուշացուցիչ (предохранитель): Փականները լավ կհամարվեն այն չափով, ինչքան վոր դրանք ավելի հուալ ծածկեն անցքերն ու ճշշտությամբ բացվեն ողի ճնշման տարրերությունից:

Դիմակը մրանում ե շնչառու մասի հետ, վորի մեջ և մտնում և կլանող տուփը կամ անմիջապես, կամ ամուր ռեզինից շինված և շորի կտորով ծածկված ճկուն շնչափող խողովակի միջոցով: Այդ շնչափողը պետք ե լինի՝ ամուր, դիմացկուն և ճկուն:

Հակագաղի ամենաեական մասը կազմում ե կլանողը, վորը դրված և լինում շնչառման տուփի մեջ: Ներկա հակագաղերի կլանողները կազմված են սովորաբար յերեք մասից՝ այսպես կոչված գործունակ ածուխից (առանձին ճկով պատրաստած փայտի ածուխ), քիմիապես ներգործող նյութերից և ֆիլտրից: Գործունակ ածուխը համարյա կլանում ե ամբողջ թ: Եւը, բայց վոչ միաշափ: Ամենից լավ կլանում ե բարձր յեռման կետ ունեցող նյութերին: Ածուխից չկլանվող գազերի վրա ազդում ե կլանողի քիմիական մասը: Ֆիլտրերը ծառայում են ծուխը պահելու համար, այսինքն, պահում են պինդ մարմինի մանրիկ մասերը, վորոնք անց են կենում կլանողի առաջին յերկու մասերից: Գործունակ ածուխը պատրաստելու յեղանակներն ել տարբեր են: Ներկայում ամենուրեք վերացված և ածուխը նախապես վորեն աղով (ցինկի քլորուկ) ծծեցնելու հին յեղանակը: Ամերիկայում գործունակ ածուխը մեծ մասամբ պատրաստում են կոկոսի ընկուզի կեղեից, Գիրմանիայում՝ շամի ծառի (օսիա) փայտից:

Քիմիական կլանման համար ծառայում են բազ-

մապիսի նյութերը: Սովորաբար գործ են ածում՝ կառուստիկ ալկալիներ, ալկալի և ալկալի հողային բնածկատներ, հիպոսուլֆիտ և նարտոնի սուլֆիտներ, կալիոնի ու նատրիոնի պերմանգանատներ, հեկզամետիթենտերամին (ֆոսգենի դեմ), սիկելի աղեր, գայլխաղի թթու (սիլիկոն), գլիցերին և այլն:

Այս նյութերի խառնուրդը յերեխն փոխարինվում է նատրոնած կրով, վորը կազմված է լինում կրի ջրատից (հանգըրած կիր), զանազան բաժիններով կրեմենտի սիլիկատների և կառուստիկ նատրոնի խառնուրդների միացումից:

Կլանողի այս յերկու հիմնական մասերի ֆիլտրի հետ միացնելը հետևանք եր պատերազմի դաշտում արսինների յերեան գալուն, վորոնք ոռումբի պայթյունով (մեծ քանակությամբ պայթուցիկ պարունակող) փոշիանում և դառնում են շատ բարակ մառախուլ, վորշիանում և դառնում են շատ բարակ մառախուլ, վորապիսին թափանցելով կլանողի միջից, զինվորներին այնպիսի անբոնելի փոշտոց ե պատճառում, վոր նրանք ստիլված պոկում են իրանց դիմակները:

Այդ ֆիլտրները սկզբում կազմված եին մի կամ մի քանի շերտ բամբակից, ապա վերջինս փոխարինվեց մամլած, առանձին տեսակի անսոսինձ թղթով և վերջապես թաղիքով (քեջա). Վերջինս ամենից լավ արդյունքն ե տալիս:

Սովորաբար կլանողի առանձին մասերը տեղադրված յեն լինում այսպես՝ արտաքին անցքի մոտ վորված յեն լինում այսպես՝ արտաքին անցքի մոտ գորվում ե գործունակ ածուխը, ապա գալիս ե քիմիադրվում և հետո ել ֆիլտրը: Յերեխն ֆիլտրը կան կլանողը և հետո ել ֆիլտրը: Յերեխն ֆիլտրը գրվում գրված ե լինում մի քանի շերտով: Կըլանողը գրվում ե անցքեր ունեցող առանձին տուփի մեջ, վորը դրսից փաթաթում յեն ֆիլտրի կտորով: Այս բոլորը միասին տեղավորում են շնչառու տուփի մեջ:

Ներկայումս դեռ վերջնականապես չե լուծված ծխի դեմ պաշտպանության խնդիրը: Ամենալավ ֆիլտրներն ել մի քանի ժամանակ ծխախոտի ծխի տակ գործելուց հետո բաց են թողնում: Ֆիլտրի չափից ավելի հաստ շերտը չափազանց գժվարացնում ե շնչառությունը: Պետք ե յենթագրել վոր ապազա պատերազմում կովի պաշտպանողական ու հարձակողական քիմիական միջոցների լուրջ կետերից մեկը լինելու և հենց այդ թունավոր ծխիրի զործադրությունը և ֆիլտրների համապատասխան կատարելազգործումը:

Մեր ցույց տված հակագաղերից և վոչ մեկը չի պաշտպանի ածխածնի թթվուկից: Ածխածնի թթվուկի դեմ գործ են դնում մետաղի թթվուկների խառնուրդ, (մարգանեցի վերաթվուկ 50 տոկոս, պղնձի թթվուկ 80 տոկոս, կրոբալտի թթվուկ 15 տոկոս և արծաթի թթվուկ 5 տոկոս): Ածխածնի թթվուկը կլանելու ժամանակ այդ կլանող նյութի խառնուրդը սաստիկ տաքանում ե, վորի պատճառով ել պահանջվում ե գործ դնել սառեցնող միջոցները: Այսպիսի կլանողը չափազանց անհուսալի ե, վորովհետև ողի մեջ յեղած խոնավությունից շատ շուտով փչանում ե:

Շնչառու տուփի սովորաբար շինում յեն հասարակ թիթեղից կլոր կամ ձվաձև: Կլանողը կազմելու և շընչառու տուփի մեջ տեղադրելու ժամանակ աշխատում յեն վոր միջի զանգվածի և տուփի պատերի մեջ ազատ տեղ չմնա, վորաեղից ողի հոսանքը կըկարողանար արագությամբ անցնել դեռ թույներից չըմաքրված:

Կլանողի բաղադրությունը պետք ե ըստ հնարավորության, պաշտպանի բոլոր բարձր կենդրոնացումով թ: Ն-երից և ծխիրից և ունենա անհրաժեշտ արագությամբ, մաքսիմալ քանակի թ: Ն. կլանելու կարողություն: Ուրիշ խոսքով, կլանողը պետք ե լինի հանրա-

մերձ (յունիական), ուժեղ, յեռանդուն և տեղունակ (տեղավորելու ունակություն ունեցող): Այն նյութերը վորոնցից կազմված ե կլանողը, պետք ե ունենան բավականաչափ ամրություն, վորպեսզի ցնցումներից չըփոշիանան: Նյութի ամրողջ զանգվածը պետք ե մամլած լինի, սակայն սեղմլածքը չափից ավելի չպետք ե լինի, վորպեսզի շատ չնւժեղացնի շնչառության դիմադրությունը: Այդ դիմադրության պատճառով դիմակը կպչում ե գեմքին ու շրթունքներին և արգելում ե շունչ քաշել: Դիմադրող ույժը չափում են ջրային մանոմետրի ջրի սյունի բարձրությամբ, վոր արտահայտում են միլիմետրներով: Ամենալավ ծխային ֆիլտրներով շնչառուները գարճայալ ցույց են տալիս 2,5 դյուիմի (1 դյուիմը հավասար է մոտ 2,5 սանտիմետրի), դիմադրություն, վորպեսին մի քանի ժամ անընդհատ դիմակից ոգտվելը նույնիսկ մարգված մարդու համար ել դժվար կըլինի:

Բացի շնչառության գործարանները և աչքերը պաշտպանող հակագաղից, անհատական պաշտպանության միջոցների շարքը պետք ե դասել նաև հակագաղային զգեստներ՝ սաղավարդները, վզնոցները, կոշիկներն ու ձեռնոցները, վորոնք կաշուն պաշտպանում են իպրիտի ու լույիզիտի ներդործությունից: Այս պարագաները պատրաստում են բամբակի գործվածքներից վորոնց տոգորում են գաղի համար անթափանց բաղադրությունով: Այդ զգեստները անհարմար են և վորոշ չափով զինվորին զրկում են ուազմունակությունից:

Մեր այս ասածներով գեռ ևս չեն սպառվում անհատական պաշտպանության միջոցների բազմապիտությունը: Բայց վերեռում հիշածներն ել բավական են հասկանալու, թե ինչքան լուրջ նախապատրաստական

աշխատանքներ պետք ե կատարե մի յերկիր, վոր ըստուգությամբ կարողանա հարկավոր քանակով հակագաղից արտադրել Անցյալ պատերազմում, յերբ միայն զորքին եյին հակագաղից տալիս, ֆրանսիան, մինչև M<sub>2</sub> դիմակների հանդես գալը մոտ 12<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն զանազան հակագաղային կապեր ու դիմակներ և արտադրել, դրանից հետո մոտ 30 միլիոն ել M<sub>2</sub> դիմակներ, մոտ 5<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն A. R. S. հակագաղից և մոտ 700000 THCCO, մոտ 80000 Դրեգերի ու 11000 ոկտիլիտային գործիքներ, չհաշված գեռ մի քանի հազար հակափրիտային ըզգեստներն իրանց պարագաներով:

Այդպես եր գեռ անցյալ պատերազմում, յերբ պատերազմը տարվում եր զիսավորապես ուսումնակատների գծերով, յերբ հակագաղից ոգտվում եյին միայն բանակները: Արդի պատերազմում պետք ե պաշտպանվի ամրողջ ազգաբնակությունը և պետք ե հոգալ վոր ամեն մի բնակիչ, մանավանդ աշխատավորը ունենա պաշտպանության այդ միջոցները: Իսկ դա նշանակում ե, վոր հակագաղից պահանջի քանակը առնվազը տասն անգամ ավել պետք ե լինի, քան այդ կար անցյալ պատերազմում: Պետք ե ինկատի ունենալ նաև այն, վոր անցիալ պատերազմում ամենից շատ գործադրվում եյին ցնող զագեր և հակագաղիցն ել ավելի յերկար եյին դիմանում: Ապագա պատերազմը տեղի ե ունենալու զիսավորապես դիմացկուն գաղերով, վորի հետևանքով ել հակագաղից չափազանց արագ կը փչանան, հետևապես անհրաժեշտ կը լինի ունենալ հակագաղից մեծ պաշար և արագացրած արտադրություն: Հակագաղից գործածությունը ֆրանսիայի համար արդեն պետք ե հաշվել վոչ թե տասնյակ միլիոններով, ինչպես անցյալ պատերազմումն եր, այլ հարյուրավոր միլիոններով: Հետևապես, հարկավոր ե

Հնարավորություն ստեղծել կլանողների ու գործունակ ածուխի համար արտադրել հազարավոր տոն քիմիական նյութեր, հարկավոր և ունենալ ֆիլտրի համար պատրաստած հատուկ նյութեր, հոգ տանել ունենալու բավականաշափ սեզին ու հատուկ գործվածքներ, սարքել մեխանիկական արտադրությունը, կարգավորել մասերից դիմակի հավաքումը և փորձելը: Այս ամենը անցյալ պատերազմում արդեն շատ դժվար երև Բայց ամբողջ յերկրի վրա Թ. Ն.-ի մասսայական գործադրության հնարավորության հետ, արդյունաբերական այս դժվարությունը այժմ տաճնապատկում և և առաջ բերում յերկրատես, նախապես զինվորա-արդյունաբերական պատրաստության անհրաժեշտությունը:

Պաշտպանության անհատական միջոցների ծախսերը ուղամաձակատում կարելի յե զգալի կերպով կը բարձատել գործադրելով պաշտպանության կոլլեկտիվ միջոցներ և հոկաթունավոր հեղուկներով չեղոքացնելով տոգորած գետինը:

Դեռ անցյալ պատերազմում գործ ելին ածում, այսպես կոչված գազապատաններ, վորոնք գետնի մեջ բնակարաններ ելին կամ ժայռերի մեջ բնական փոսեր, կամ ուղղակի հասարակ շենքեր, վորոնց մուտքերը ծածկվում ելին յերկտակ կամ յերեք տակ գազերի համար անթափանց վարագույներով: Այդ աղաստաններից ամենից կատարելազործվածները նըրանք են, վորոնք ունեն ֆիլտրներ և վենտիլյատորներ: Այդ գազապատաններում կարելի յեր ճաշել և ընդհանրապես հանգստանալ հակագաղերով շնչելուց չենց այդ գազապատանները կարող են ծառայել նաև սկզբնական ոգնություն հասցնելու համար: Գազապատանների անհարմարությունը նրանց անշարժու-

թյունն եւ Ապագա պատերազմում դիմացկուն Թ. Ն.-ի մասսայական գործադրության գեպքում զորամասերը սախպված են լինելու մեծ տարածություն անցնել թունավորված գոտիներով: Թշնամու ողանավերը հետամըտելով զնացող զորայուներին կարող են անընդհատ շարունակել շարժման ուղղությամբ հողը թունավորեցարունակել իշտման անցյալության և լը: Այսպիսի դեպքում հակագաղերի խնայողության և հանգստի համար պետք լայն չափով գործադրվեն հեշտ տեղափոխվող ծալովի դագապատան-վրանները: Վերջինու կարելի կիննի պատրաստել գազանթափանց վերջինու կարելի պատրաստել գազանթափանց կտորից և կունենա ֆիլտրներ ու վենտիլյատորներ կամ ոքսիլիտային դործիքներ:

Նախորոք պատրաստած ֆիլտրներ չունենալու գեպքում, այդպիսիները կարելի յե ձեռաց պատրաստել հողից, փայտի թեփից և այլն, վորոնց տոփորում են մեքենայի յուղերով կամ ընդհանրապես մածուցիկ հեղուկներով:

Արդի պատերազմում գազապատանի խնդիրը գույտ ուղամաձակատային չի գառնում: Ամբողջ յերկիրը կարիք և զգալու Թ. Ն.-ից պաշտպանված այդպիսի տեղերի, ուր կարողանա անցկացնել վտանգավորմիջոցը:

Այդ վերաբերում և մանավանդ ազգաբնակության այն մասին, վորն անմիջապես չի մասնակցում զորքին մատուցող ծառայություններին կամ արդյունաբերությանը: Այդպիսիների թվում են ծերերը, կանայք և յերեխանները:

Թ. Ն.-ի վտանգին համեմատաբար քիչ և յենթարկվում ուղամաձակատից հեռու ընկած գյուղերի բնակչությունը: Թշնամու համար բնավ ձեռնոտու չե միտք ել չունի Թ. Ն. շուայլել նոսր բնակչություն ունեցող և յերկրի գարչակազմի (աղմինիստրացիայի),

արտադրության և հայթայթման գործերում փոքր դեր կատարող վայրերի վրա: Գյուղերը կարող են միայն պատահաբար ընկնել ստրատեգիկ նկատառումներով կամ քաղաք կենսական մթերքներ բերելը խանգարելու նպատակով ուղմական գաղերով թունավորված գոտիներում:

Ողանավերի կամ սավառնակների ոգնությամբ գաղային գրոհը գլխավորապես ուղղված կլինի մեծ քաղաքների, արդյունաբերական կենտրոնների, յերկաթուղային հանգույցների, նավահանգստների, բերդերի դեմ և այլն: Հենց այդ վայրերում ե, վոր ամենից ավելի կարիք կզգացվի գաղապաստանների:

Հասկանալի յե, վոր դրանք չեն կարող հապճեպ ու անպատրաստից շինվել: Քաղաքների արդի բաղմամարդության հանդեպ, յեղած հերմետիկ կերպով փակող շենքերը շատ քիչ են: Բացի այդ, տներում մնալն ել վտանգավոր կլինի, փորովհետև թշնամու ու դային տորմիղը կգործե նաև ավերող ու այրող ուռմերով: Հենց անցյալ պատերազմում, Պարիզի վրա զերմանական ողանավերի հարձակութների ժամանակ, ամբողջ բնակչությունը բնազդաբար դուրս եր փախչում տներից: Այդ դեռ այն ժամանակ, յերբ եական լուրջ վտանգ չեր սպառնում, վորովհետև ողանավային միջոցներն ավելի անկատար եին քան այժմս են, իսկ թ, Ն. բոլորովին չեյին գործադրվում: Պետք ե ի նկատի առնել և այն հանգամանքը, վոր պատերազմի ժամանակ քաղաքներում մնում են ազգաբնակչության սարսափի շուտ յենթարկվող մասը:

Ի հարկե, սրանից չպետք ե յեզրակացնել թե հենց վոր պատերազմը սկսկվի, պատերազմող յերկոների բոլոր խոշոր քաղաքները անմիջապես կըյնթարկ վեն կործանման, իսկ բնակիչները՝ թունավորման:

Քաղաքների ակտիվ պաշտպանությունը, վոր գլխավորապես կազմված կըլինի սավառնակներից, կարող են յերկար ժամանակի ընթացքում հետ մղել թշնամու գրոհը: Քաղաքներին վտանգ կսպառնա միայն այն ժամանակ, յերբ թշնամի կողմերից մեկը յերկրի այդ տվյալ վայրում ոդի մեջ իշխող կըհանդիսանա: Իսկ յեթե կողմերից մեկը վերջնականապես տիրապետե ոդին, պաշտպանությունը բաձարձակապես անհնարին կըլինի: Մյուս կողմը պետք ե անձնատուր լինի, թեկուր նրա զորքն այդ ժամանակ հաղթական կերպով առաջ խաղալիս ել լինի:

Մյուս կողմից այնքան ել դյուրին բան չե բարայից 500—700 վերստ հեռավորության վրա գտնվող մեծ քաղաքների վրա հարձակում գործելը: Հարձակում գործողը կարող ե ընկնել իր ողանավերի զգալի քանակը կորցնելու վտանգի մեջ: Այդպիսի քայլ անել կարող ե վճռել միայն այն կովող կողմը, վորը շատ մեծ գերակշռություն ունի ոդում:

Համենայն դեպս, պետք ե խոստովանել վոր արդի պատերազմում բնակչություն ունեցող ու արտադրություն ունեցող կենտրոնները ընկնում են ավերման ու թունավորման անմիջական սպառնալիքի տակ: Ուստի հակագաղային պաշտպանությունը պետք ե տարածվի վոչ միայն ուղամաճակատի, այլ և ամբողջ յերկրի վրա: Առաջին հերթին անհատական պաշտպանության բոլոր միջոցները պետք ե տրվեն բնակչության այն մասին, վորը անմիջապես հարկավոր ե զորքի, արտադրության, հայթնայթման և տրանսպորտի համար, ապա միայն տալ մյուս բնակիչներին: Գազապատառները, վորոնք կարող են նախորոք կառուցված լինել կամ փոխարինվել քաղաքներում յեղած խորը նկուղները և շենքերը հարմարեցնելով այդ նպա-

տակին, առանձին նշանակություն կունենան: Ոյք գաղապաստանները ոգտակար են միայն սկզբնական շրջանի համար: Բնակչություն ունեցող վայրերի վրա թունափոր և պայթուցիկ նյութերով, հրձիդ ուրմբերով յերկարատե հարձակումների ժամանակ, բնակչությունը ստիպված հեռանալու յե ներկայում պաշտպանության անպատճաստ քաղաքներից: Ազգաբնակչությունը կարող է թագնվել շրջակայքում նախորդք պատրաստված գաղանթափանց վրաններում կամ հողե հյուղերից կազմված գաղապաստաններում: Պետք է դրանք պատրաստի ունենան ուտելիքի մեծ պաշար, վորովհետեւ փախած ազգաբնակչությունը կըդադարի մթերքներ հայթայթելուց: Կենտրոնի և զորքի մեջ կապ պահողներին, բանակին ուտելիք ու սազմամթերք հայթհայթող սպասավորներին պետք է առանձնապես պաշտպանություն ցույց տալ: Գնացքները պետք ե հարմարեցրած վենտիլյատորներ ու ֆիլտրներ ունենան: Կարող են մեծ օգուտ մատուցանել նաև մեծ հակազարյակն կամիոնները:

Բնակչություն ունեցող կենտրոնների վրա կատարած հենց առաջին գրոհի ժամանակ կոլեկտիվ պաշտպանությունը առաջնակարգ տեղ է զրավելու: Պաշտպանության անհատական միջոցները անբավարար են նույնիսկ մինիմալ չափով պահպանելու քաղաքի կամ արդյունաբերական կենտրոնի վարչակազմի ու հայթհայթման աշխատանքները: Նրանք ևս առավել անպետք են 3—5 տարեկան յերեխաներին փըրկելու համար, վորոնք անկարող կիններ ոգտվելու հակագերից, վորոնք դժվարացնում են շնչառությունը, նույնը և հիվանդների, թույլ կամ արագ շնչող ծերերի նկատմամբ: Բնակչության այդ ամբողջ մասսան բոլորովին զուրկ կըլինի պաշտպանությունից,

յեթե չիննեն նախապես պատրաստված գաղապաստան ներ, նախ քաղաքում և հետո քաղաքից դուրս, Քաղաքում կոլեկտիվ պաշտպանություն կազմակերպելը չափազանց բարդ է, չի կարելի ձեռաց պատրաստել, այլ պահանջում է մեծ ծախսեր: Քաղաքի այդպիսի վերակառուցումը կարելի յե ընդունել վորպես մաքսիմում ծրագիր: Մակայն, պետք է և կարելի յե ձեռք բերել պաշտպանության համար ուրիշ շատ մատչելի միջոցներ: Քաղաքի ամեն մի նոր խոշոր շենք, կանալիգացիայի աշխատանքները, մետրոպոլիտենի (ստոր յերկրյա ճանապարհ) փորվածքը, թաղային հանրային արտաքնոցներ, ամեն տեսակի նկուղներ, պահեստներ, քաղաքից դուրս հողային և այլն աշխատանքները պետք է կատարվեն աչքի առաջ ունենալով այդ նոր տեսակետը: Պետք է ինկատի ունենալ այդ շենքերից ոգտվելու հնարավորությունները վորպես գաղային ապաստաններից: հետևապես, պետք է ուշադրության առնվեն մեծ թվով մարդկանց շնչառության ու ապրուստի պայմանները:

Ազգաբնակչությունը գաղային վտանգի ժամանակ պետք է հրահանգված լինի և յենթարկված դիսցիլինային նրան պետք է ցույց տրված լինեն պաշտպանության տարրական միջոցները, վորը կարող է ամեն մարդ գործադրել ոգտվելով տնական միջոցներից: Բոլոր այդ տարրական միջոցները պետք է նախապես փորձված լինեն: Բացի դրանից, լայն կերպով պետք է կանոնավորած լինեն թ: Նորի չեզոք քացումը հակագաղային հեղուկների ոգնությամբ:

Հավանական է, վոր այդ հեղուկներից կարենը դեր են խաղալու թթվացնողները, մասնավորապես քլորային կիրը և նատրոնի պերմանգանատը: Այդ նյութերի ծախսը չափազանց մեծ է: Քլորային կիր

մասնիկների ամենանուրբ փոչիացման պայմաններում հարկավոր և 20 կիլոգրամ քլորային կիր 1 կիլոգրամ իզգրիտը չեղոքացնելու համար: Նշանակում ե, անհրաժեշտ և ունենալ այդ նյութերի մեծ արտադրություն և ռազմաճակատներում ու քաղաքներում ել մեծ պաշտոն: Կարող են նույնպես գործադրվել ֆիզիկո-մեխանիկական միջոցներ՝ փողոցներում փայտի ածուխ կամ մոխիր շաղ տալ խարույկներ վառելը կամ փոքր կույտերով պայթուցիկ նյութեր պայթեցնելը: Սակայն հարկավոր և ի նկատի ունենալ վոր այդ միջոցները դեռ շատ հեռու յեն արմատական լինելուց և վոր պետք և աշխատանքը կատարել ոդային թշնամու կը ըսկի տակ:

Թշնամու ոդային նավատորմիդի ջանքերն առանձնապես ուղղված կը լինի խոշոր գործարանների համախմբումների դեմ: Հակառային ինքնապաշտպանությունը առաջին իսկ հերթին ամենահոգատար վերաբերունք պիտի ունենա դեպի սազմա-քիմիական գործարանները, Գործարաններն իրանց բարձր ծրինելույզներով հիանալի նշանակետեր են ոդանավերի համար: Մասամբ այդ նշանակետերը կարող են դիմակավորվել ծխային լայն ծածկոցներով, բայց և այնպես սազմաճակատից վոչ հեռու գտնվող խոշոր գործարանները պետք և ունենան պատրաստի ոդանավերի բավկանաչափ զորեղ եսկադրելուն, վորպեսզի կարողանան դիմադրի ոդային թշնամուն: Արտադրության ամենակարեսը մասերը, յեթե այդ թույլ ե տալիս կառուցվածքի բնույթը ժամանակավորապես կարող են փոխադրվել մի այնպիսի տեղ, վոր վոչնչով շատրվարվի շրջապատի միջավայրից:

Թ. Ն.-երի դեմ յերկիրը պաշտպանելու մասին ասած մի քան խոսքերով դեռ չի կարելի սպառված

համարել արդի ոգու-քիմիական գենիքի վրա հիմնված պատերազմի բոլորովին նոր պայմաններում քննվող խնդրի բարդությունը: Այդ գենիքի նշանակությունը գնահատելիս մենք աշխատացինք ամեն կերպ իրույս տալ ֆանտաստիկայից, այլ յելակետ յենք ունեցել գույս որդյնկարիվ պայմանները:

Յեզրակացությունը պարզ և, աղադա պատերազմում Թ. Ն.-երի մասսայական գործազրության և ուղանավային տեխնիկայի կատարելագործության շնորհիվ ամեն մի քաղաքացի հանդիսանում է զինվոր, իսկ այս ամեն մի կատարացի հանդիսանում է Պաշտպանությարկի ամեն մի կատար ուղամածակատ: Պաշտպանության և հարձակման բոլոր միջոցները քննության մեջ կատար ամեն մի կատար ուղամածակատ: Խորը թիւպետք և առնվին հենց այդ տեսակետով: Խորը թիւպետքի վրա հարձակումը միծաքանակ թունավոր ուղայթուցիկ նյութերով կատարելու հնարավորություն ունենալու համար հարկավոր և ոդային մեծ և զորեղ նավոտորմիդ, այսինքն, լավ հիմքերի վրա գրած ավելիցիւն արգյունաբերություն և կանոնավոր կերպով կազմակերպած քիմիական լայն արդյունաբերություն:

Այդ հարձակումներից ամբողջ յերկիրը պաշտպանելու հնարավորություն ունենալու համար հարկավոր և նախապես մշակված կոլեկտիվ ու անհատական պաշտպանության բարդ կաղմակերպություն և զարձյալ համապատասխան քիմիական, մեխանիկական ու ձարտարապետական արդյունաբերություններ:

Առանց այդ նախապես «խաղաղ» նախապատրաստությունների, յերկիրը գատապարտված կը լինի պարտության:



7/11/1922

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Ա. ՍՊԱԾԻԿԱՅԻ ԱՆԴՎԵԼ

## Յ Ա Կ Կ

ՑԵՐԵՍ

|                                                                      |    |
|----------------------------------------------------------------------|----|
| I. Ծուսերեն հրատարակության խմբագրության<br>կողմից                    | 3  |
| II. Հառաջարարական հայերեն հրատարակության                             | 4  |
| 1. Բնդէանուը զրությունը                                              | 5  |
| 2. Թ. Ն.-երի գործագրությունը անցյալում<br>և ապագայում                | 14 |
| 3. Համաշխարհային քիմիական արդյունա-<br>րերության զրությունը          | 22 |
| 4. Պայթուցիկ նյութերի արտադրությունը                                 | 29 |
| 5. Թ. Ն.-երի արտադրության համար ան-<br>հրաժեշտ հում նյութերի ստանալը | 39 |
| 6. Ցերերի քիմիական ինքնապաշտպանու-<br>թյունը                         | 47 |

«Ազգային գրադարան»



NL0292587

## ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Ն. ՅԱՅՈՒԿ. — Աղակնացությունը և քիմիան
2. Գ. Դ. ՈՒԳՐՑՈՒՄՄՈՎԾԻ. — Պատերազմական թունավոր նյութերի գործածությունը խոզադ ժամանակ.
3. ՅԱ. ՖԻՇՄԱՆԻ. — Քիմիան ժողովրդական առողջապահության և յերկրի պաշտպանության մեջ.
4. Ա. Վ. ՆԱԳԲՈՒՆԻ (Պրիվ. դոցենտ). — Թունավոր նյութերի ֆիզիոլոգիկ ներգործությունը մարդկային որդանիգմի վրա:
5. ՊՐՈՖ. ՅԵ. Ի. ՈՐԼՈՎԾ. — Խուսական քիմիական արդյունաբերությունը համաշխարհային պատերազմում, յերկրի պաշտպանության համար: